

ՀՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻՅԱՅԻ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱՆՈՒՂԱԳԻՏՈՒԹ-ՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ԺՄԱՓՄՆԵՐԻ ՄԱՐԿԱՐԾ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՊՈՂՈՎԱԾՈՒ

Եղիշան
Օմի

Երեվան 2005

78(479,25)

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐՎԵՍՏԻ ԲՆԱՏԵՍՈՒՏ

ՀԱՅ ԱՇՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒՅԹ

A II
9/201



ԵՐԵՎԱՆ 2005

Խմբագիր՝
Արվեստագիտության դոկտոր, ոլորդեստր **Լիլիթ Երնջակյան**

Ժողովածուն աճփոփում է «Հայ առողագիտությունը և արդի հիմնախմնոյթները» գիտաժողովի նյութերը: Արձարձված են առողական երգարվեսի ձևավորմանը, ժանրային, թեմատիկ և տաղաչափական առանձնահատկություններին ու կատարողական ավանդույթին առնչվող դրամատիսական և մշակութարաբանական խնդիրներ: Ներկայացված են նաև նշանավոր արվեստագիտների ստեղծագործությանը նվիրված գեկոցումներ, տեղեկատվական բնույթի հաղորդումներ: Դախառավածված է առողական արվեստի հարցերով գրադիր մասնագետների, ինչպես նաև ընթերցողների լայն ցողանների համար:

Լիլիթ Երնջակյան

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինսիտուտ

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻԲՆԵՔԸ

Բազմաձյուղ ու բազմաքննույթ առողջական ավանդույթ հասկացությանն առնչվող երաժշտարանաստեղծական, գեղագիտական, սոցիալական, կրնամշակութային խնդիրները յուրաքանչյուր ազգային արվեստում իրենց արմատներն ունեն: Այդ մեծ համարևելյան ավանդույթի մեջ ընդգրկված հիմնական գեղարվեստական հոսանքները բխում են Իրանի, Թուրքիայի և Անդրկովկասի տարբեր ժողովուրդների՝ հայերի, ադրբեջանցիների, վրացիների մշակութային ակունքներից:

Հարուս երկարանակ ունեցող հայ երգարվեստը բաղադրական, սոցիալ-սննդական դայմանների բերումով ուժ միջնադարում նոր հիմքերի վրա սկսեց հարաբերվել իրեն Երաժշտող մահմեդական աշխարհի գեղարվեստական երևույթների հետ: Պահպաննելով գեղջկական երգ-երաժշտության անաղարտությունն ու ուրույն կերտվածքը, սահմանազատելով եկեղեցական երաժշտությունը՝ իրեն արևելագրիստոնեական հոգևոր երգարվեստի վառ և ինքնաշխատ երևույթ՝ այն իր ժողովրդամասնագիտացված ճյուղով հաստատվեց Արևելի բանակոր ավանդույթի երաժշտարանաստեղծական արվեստի ասդարեզում:

Թեև «առող» բառն արարական ծագում ունի, իսկ ժամանի ծագումը կաղված է Իրանի մշակույթի հետ, այն հաւատդիմ մեծ հնչեղություն ու համարում է սացել Իրանական Ադրբեջանի հայ-բուրգական բնակչության արհեստավորական Երաժշտություն, ինչողևս նաև Օսմանյան Թուրքիայում:

Անուուծ, «արևելյան թերում» ունեցող ժաների կենցաղավարման դայմաններն են թելադրել դրանց ձկուն և բաց բնույթը. Եթե հայոց եկեղեցին ձգտում էր ավանդական հոգևոր երգերի անաղարտության և դրանց կատարողական ոճի մարդության դահլիճնմանը՝ նորասակակետ ունենալով ժողովրդի հայեցի ոգու և իր զաղափարախոսության ամրադիրումը, առաջ այլ էին առողջական արվեստի հասարակական դերը, լսարանի կազմն ու ըմբռնումները:

Առողջական արվեստը կոչված էր ծառայելու հիմնականում բա-

դաժային բնակչության «երկեզու և եռալեզու» խավերին, բավարարելու նրանց գեղագիտական դահանջները: Կենցաղային ավանդական մշակույթը, սվալ տարածում իշխող լեզուն անդրադառնում էին կատարողական ոճի և երկացանկի վրա, որը կազմված էր առողջական երգերից ու սիրավելերի երաժշտական ասեղջական դրվագներից, դարեղանակներից ու մուղամներից:

Արևելի մյուս երկների առողջների նման հայ առողջները ևս ստեղծեցին իրենց կատարողական դրդոցը, վոկալ արվեստի սեփական սկզբունքները՝ առաջնորդվելով իրենց բնակության խալաների նաև ագիտացված ժամերի ավանդույթներով: Ժողովրդամասնագիտացված երաժշտության ոլորտում ստեղծագործող հայ երաժիշտները դասմականորեն տևական և չընդհատվող ժաման մեջ են եղել հարևան ճահմեդական շրջապահ հետ, և բնականարար, ձգտել են իրենց արվեստով ընկալելի լինել: Այդ միտումն է մղել հայ երաժիշտներին մշակելու հայոց ուրախը դարսկա-արարական ձայնակարգերի հետ հարաբերակցելու ժամական հիմունները, դիմելու օսար եղարանուրյանը, ծնունդ է սկզի հայատոք բուրժուատ երգերի, արևելյան ոճ ու երանգավորում ունեցող՝ գեղգեղանիներով հարուստ մեղեդիների ստեղծմանը¹:

Սկզբնավորվելով օսար միջավայրում, ժամերի ձևավորման դասական շրջանում հաստատագրելով իր ինքնահիոյ կատարողական ավանդույթը՝ հայ առողջությունը սկզի որոշակի արևելյան թերում ունեցող՝ դարսկահայկական, քուրսահայկական և Վրացահայկական ինսիստուցիոնալ կազմավորումներ, դարակազմիկ նշանակություն ունեցող այնոյիս արվեստագետներ, ինչոյիսի են Սայար-Նովան և Զիվանին: Օրինաչափ կերպով վերանալով դատմամշակութային ասղարեզից, իրենց ժեղու գիծելով բուն հայկական առողջական դրդոցին՝ հիշյալ թերում ունեցող դրդուների ներկայացուցիչներն ամփահասելի ավանդ ներդեցին ընդհանուր արևելյան մեղեդային բանականի, առողջական արվեստի երաժշտաարահայշչական ձևերի ու կառուցվածքային սկզբունքների մշակման ոլորտում: Ազվածի աղացույցներից են Իրանական Ադրեջանի առողջական երգարվեստում տարածված *հայս արմանի* (հայկական մեղեդի) կոչվող եղանակները, ինչ-

¹ Երնջակյան Լ., Դայ մուղամաթիսները և նրանց դերը արևելյան երաժշտական մշակույթի զարգացման մեջ, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1982թ., N2, էջ 44-53:

ուս նաև քորք աշումների վկայությունները՝ *Գյումրիից* ու *Էրևանից* իրենց հասած երգերի մասին:

Առանձնադեմ մեծ է նրանց դերը երգային ու դարային համարներով գործիքային խմբովիզացիանները մեջընդմիջելու և դրամատիկ ու դիմամիկ հակադրություններ ստեղծելու գործում։ Երգային ու դարային բնույթի չափավորված մասերը՝ զաֆերը, ժողովրդամասնագիտացված արվեստի այն ոլորտն են կազմում, որ մուղամաթի արվեստը կամքջում են աշուղականին և, մեր համոզմաճը, այս հանգամանքը չափազանց կարևոր է զանազան աշուղական մեղեդիների ազգային բնույթն ու ծագումը հննելիս։

Օսար աղբյուրներում գետեղված և սխալ մեկնաբանվող փաստագրական նյութի, նոտային հրատարակությունների ուսումնասիրություններից ակնհայտ է դաշնում, որ քորքական ժողովրդական երգերի բազմաթիվ ժողովածուներում ընդգրկված քորքի և շարժի կոչվող մեղեդիների մի մասն էլ հայկական միջնադարյան հոգևոր մեղեդիների, տաղերի, զանձերի, աշուղական երգերի՝ քորքերն իւ վերածված տարբերակներն են։ Ներքաւելով քորքական ժողովրդական երաժշտության ոլորտը՝ հայկական մոնողիաների ոիրմաշափական և հուկական-արտահայտչական բնութագրերը ժամարանի-գործառնական ու բովանդակային փոխակերպումների են ենթարկվել, սակայն ձայնակարգային-ելեկային հիմքն ու մեղեդային գծագրերը գրեթե անփոփոխ են։

Ցայտուն օրինակներից են «Vardar ovasi» քորքին, որ Ս. Այրիվանցու «Սիրս իմ սասանի» զանձի նմանակն է, ինչպես նաև քարսյանս-գյոզալլամասի անունը կրող տարեր հալսաներ, որ Սայաթ-Նովայի երգերի, մասնավորապես՝ «Արի ինձ անզած կալ, այ դիանա սիրս» խաղի երաժշտական դարբերույթների և կցերգական կտորության գծագրերի կրկնօրինակներն են։ Թեև ժամանակին Սայաթ-Նովայի որոշ երգերի խոսքերի և երաժշտության համադատասխանության հարցադրումների ժամանակ հիշյալ խաղի բարոյա-խրատական բովանդակությունն ու եղանակի դարային բնույթը երկմանին առիր են սվել, ոլիսի ասենի, որ մեղեդոյ ելեկային ու չափակտույթային չափագծերն այնքան հարազատ են հայկական ժողովրդական երգերին, որ անկախ սայաթնովյան երգերի տուրք ծավալված հննարկումներից՝ դիտելի են իրեւ ազգային արվեստի բնութագրական նմուշներ։

Աշուղական արվեստի հայացումը Մերձավոր Արևելի մշակութա-

յին խառնարանում ընթանում էր լեզվի, կրոնի և ազգային երաժշտամասնության առանձնահատկություններով դայմանավորված ազգային ինքնության խնդիրների ավելի հստակ ըմբռնումով։ Հայ առողջերը քիչ էր հրատակած էր ինը. նրանց հովանավորող և երաժշտարանասեղծական ձիրենով օժոն սրբություն էր ճանաչվել Մօն Սուրբ Կարապետը²: Այս երեք գործոնների միաձույլ կիրակումով Սայաթ-Նովան ուղենուց հայ առողջության հետազոտական գարզացման ընթացքը՝ հարթելով հայ հոգևոր և աշխարհիկ մասնագիտացված արվեստների միջև գոյացած անջրդեմը³:

Օգանադրես միաձուլելով հայկականն ու համարելեյանը, ավելի սույոյ՝ դարսկականն ու քուրքականը, հայ առողջերը կրողները դաշտան նաև այնդիսի երևույթի, ինչողիսին առողական երաժշտարանասեղծական սիրավետն է։ Եթե սկզբնական երջանում նրանք նախադրես հայերեն կատարումներով ժողովրդին ծանոթացնում էին արևելյան հայտնի սիրավետերին և հեմիարներին, ինչողիս օրինակ, Քյոռողլու, Ավլու և Քյարամի, Ծահ Խսնայիլի, Առու Ղարիքի և Ծահ Սանամի ստեղծագործաբար մշակված և հայացված տարբերակներին, աղա հետազոյն հայ առողջերը ստեղծեցին զուս հայեցի ասեր ու դատումներ՝ «Աղվան և Օսան», «Սմբատ և Սոֆյա», «Սոս և Վարդիքեր», «Վարդ և Մանուշակ» և այլն։

Սիրավետերի հայերեն երգերն այնքան սիրված են եղել Անդրկովկասում ու Թուրքիայում, որ նույնիսկ մինչև XX դարի կեսը աղավաղված ու վերանվանված շարունակել են գոյատել ժողովրդամասնագիտացված արվեստի կրողների երկացանկում։ Այդ ժեստերի հայտնարերումը քուրք և աղրբեջանցի առողջերի երկացանկում նոր փաստերով են համալրում մեր սկզբունքային դիրքորոշումը մերձավորակնեյան դասական մեղեդիների ստեղծման ու կանոնականացման գործընթացում հայ առողջերի երաժշտական ավանդի վերաբերյալ։

Նյուրի հետազոտությունը վկայում է, որ առողական մեջույթի ավանդության ձևավորվել ու զարգացել է դասմական Հայաստանի Կարս և Էրզրում նահանգներում և, որ ամենակարևորն է, այդտեղ են գրառվել «Քյոռողլու» ամենահին տարբերակները։ Տարածաշրջանի առողական

² Տես Դարությունյան Ս., Մօն Սուրբ Կարապետ եկեղեցու դաշտամունքային նախահիմները, Յայոց սրբեր և սրբավայրեր, Երևան, 2001 թ., էջ 21-28:

³ Թահմաջան Ս., Սայաթ-Նովան և հայ գուսանա-առողական եղանակամասնությունը, Drazark press, Pasadena, 1995.

արվեսի զարգացման և ձևավորման գործում (հատկապես XIX-XX դդ.) հետազոտողներն առանձնացնում և մեծապես կարևորում են այն-դիսի անուններ, որոնք դարզորու կերպով հույսում են նրանց հայ լինելը՝ առող Վիրանի Անիից, Չոլալի, Սազայի, Մեյհունի և այլն⁴: Վերո-հիշյալ անվանի առողների ազգային դասկանելիությունը բացահայտում է չի արձանագրվում, սակայն նրանի իրավամբ համարվում են ներկայիս առողական երգարվեսի հիմնադիրները, ինչողև Կարս ու Երգու-մը՝ առողական մրցույթի ավանդույթի բնօրանը:

Բազմաթիվ հանրահայք բուրք առողների վկայությամբ նրանց իրենց գիտելիքներն ու արվեսի հիմն ամրադնելի ու զարգացրել են «ռուսական և իրանական Աղրեջանում», եջազայել ու տփվել են Թիֆլիսի, Գյանջայի, Գյումրիի և Ռևանի առողների հետ: Առող Շերի-ֆը հատկապես կարևորում է Երիվանի ռադիոյի երաժշտական հեռար-ձակումները և իր հարցագրույցի ընթացքում կատարելով մի շարք առո-դական մեղեդիներ՝ ընդգծում է, որ այդ բոլոր երգերն իրենց մոտ են եկել Երիվանից⁵:

Հար և նման խոստվանություններն ու փասերը զայիս են մեկ անգամ ևս հաստատելու հայ երգարվեսի ու երաժիշտների՝ մուղամա-թահարների, սազանդարների ու առողների ստեղծագործության դերն ու դասմական առաքելությունը Մերձավոր Արևելի երաժշտամասնա-գիտացված արվեսի զարգացման ու նրա լավագույն ավանդույթները հետազա սերունդներին փոխանցելու գործում: Մեր առաջնահերթ խնդիրներից է օսար աղբյուններում գետեղված և միակողմանի մեկնա-բանվող փատագրական և երաժշտական նյութերի հաճախիր ուսումնա-սիրությամբ ուղիներ հարթել սարածեցանի առողական երգարվեսին նվիրված աշխատություններում հանիրավի լրության մասնական հայկական երաժշտական ավանդույթի դասմական դերի ճանաչման և կարևորման համար:

Հայ առողության «օսարումը» մերձավորակելյան ավանդույթից հետազայում հանգեցրեց նաև արևելյան սիրավետի դասական մոդել-ների դեգրադացիային: Զիվանու և նրա ժամանակակիցների հեղինա-կած սիրավետերից հետո ժանիր, որդես այդդիսին, չի զարգանում հայ ժողովրդամասնագիտացված արվեսում, թեև նրա երաժշտական բա-

⁴ Ensar Aslan, Cildirli Asik Senlik, Ankara, Sevin Matblaasi, 1975, p. XLI.

⁵ Erdener Y., The Song Contests of the Turkish Minstrels, New York & London, 1995, p. 32.

դադրիչի ցայտուն օրինակները՝ որդես հայ ժողովրդի կենցաղում խորապես արմատացած ինքնուրոյն երգեր, շարունակում են գոյաւթել բանահյուսական մակարդակում:

Եթե ժամանակի թելադրաներով Զիվանու (ինչպես և նույն ժամանակակից այլ աշուղների) ստեղծագործությամբ արևելյան սիրավետը վերածնունդ առլեց՝ դառնալով ավանդական ժանրի ազգային հեղինակային մեկնակերպ, առաջ հետազայում աշուղի ստեղծած մեղեդիները՝ անհատականացված բնութագրերով, յուրօհնակ լեյտենոնիվներ դարձան սիրավետ ասացողների համար՝ նոյասելով երաժեսաբանաստեղծական առանցքային դրվագների ժողովրդականացման ու հեղինակային տեսի հիման վրա ստեղծված տարբերակների բազմացմանը: Այսու, Զիվանու ստեղծագործությունը ավանդույթի փոխանցման գործընթացում նշանակալի փուլ է՝ «արևելյան» կողմնորոշում ունեցող ժանրն իր ժամանակի սոցիալ-մշակութային համատեսում ընդունելի կերպավորումով ներկայացնելու դիմակետից:

Աշուղական արվեստի սկզբնավորման, ազգային հիմքի և օսար ավանդույթի փոխարարելության, հանրային-հասարակական կողմնորոշման ու գեղագիտական ընկալումների խնդիրներն առիթ են սկզել տարակածությունների և հակասական վերաբերմունքի: Հայ մշակույթի զարգացման ամենատարեր ժամանակափուլերում ժողովրդամասնագիտացված արվեստն իր հիմնական սեռերով ու ներկայացուցիչներով՝ գուսաններով, վարձակներով, մրրուղներով, սազանիդաներով, աշուղներով, մուղամաքահարներով, երկփողվել ու դահսարակվել է, բննադասվել ու դրվասնայի է արժանացել: Նրանց արվեստի հճեղությունն ու հասարակական դերն այնքան մեծ են եղել, որ իր վրա է թևենել թե՛ ժողովրդական զանգվածների, թե՛ դալատական վերնախավի և թե՛ հոգլուր այրերի ուժարությունը: Այդ արվեստի երաժեսականարողական ավանդույթի դահդանումը՝ ազգային արժեքի նշանաբանի ներքո, վիճահարույց է համարվել թե՛ մասվորականության և թե՛ մասնագիտական շրջաններում: Թերևս այդ հարցում իր դերն է կատարել նաև Կոմիտասի դիրքորոշումը սկյալ բնագավառի նկատմամբ:

Կոմիտասի գիտական-ստեղծագործական գործունեության տարիներին ազգային-աշուղական դրույցը զարթում էր ապրում և մեծ ժողովրդականություն էր վայելում, բայց հայ երաժշտության մեծ երախտավորը նոյատակ չի ունեցել զբաղվելու հայ մոնողիկ երաժշտության

սվյալ ձյուղի ուսումնասիրությամբ⁶: Ժամանակի բաղաբական հանգամանեներով դայմանավորված նրա զգուշակությունը նույնագույն է բնագավառի անտեսմանը հայ երաժեսագիտության որոշակի փուլում, չնայած տարբեր առիթներով Կոմիտասի արտահայտած մստերն ու տարածելով գնահատականները բավարար հիմք չեն տալիս հստակեցնելու նրա վերաբերմունքն աշուղական երգարվեսի, հատկապես «Պարսկա-սամկական» ավանդական եղանակների վերաբերյալ:

Որո՞նք են, այնուամենայնիվ, աշուղական երգարվեսի և կամ ընդհանրապես ժողովրդամասնագիտացված ստեղծագործության ցանկացած այլ ոլորտի՝ մուղամարի, սազանդարական երաժշտության, բաղասյին-ժողովրդական երգի խոցելի և անհանդուժելի կողմերը, որոնք նրանց հոգեբանական, ենթագիտակցական կամ գիտակցական մակարդակներում դաշնեւում են հայ մշակույթի զարգացման հիմնուղուց:

Բազմադարյան հոգևոր մոնողիայի, երաժշտական բանահյուսության զարգություն ժամանելի համեմատ աշուղական արվեստը բնութագրվում է մի շարք հիմնորոշ համեմատական աշուղարվեստական ավանդույթին: Ակզրունեային ընդհանրությունները նկատելի են թե՛ ձևակառուցվածքային առանձնահատկություններում, թե՛ տաղաչափության մեջ, թե՛ երաժշտական բաղադրիչի ձայնակարգային հիմքում, որոնց երգարանությունն օսարածին է: Սակայն ընդհանրությունը բնավ չի ենթադրում միակողմանի ազդեցություն, առավել ևս ազգային ավանդույթի նսեմացում կամ թերագնահատում: Երաժշտականաստեղծական և դաշնողական ավանդույթը հնարավոր չէ փոխառել կամ ընդորինակել մերժենայորեն, եթե չկա խորբային մշակութարանական հենք:

Առանձին խնդիր է հայ աշուղական արվեստի դիմագիծը ուժ միջնադարում, երբ աստիճանաբար խորացող միջավայրի ու մշակույթի արևելյականացման միտումն իր կնիքն էր դնում ոչ միայն ավանդական գուսանաաշուղական երգ-երաժշտության, գործիքային մասնագիտացված արվեստի, այլև ընդհուպ հոգևոր երաժշտության որու ժամանելի վրա⁷: Հետևաբար առաջնային խնդիր էր դաշնություն հայ երաժշտարվեսի,

⁶ Այս խնդիրը լուսաբանված է Մ.Մանուկյանի «Կոմիտասը և հայ աշուղական-գուսանական երգարվեսի հարազատության հարցը» հոդվածում (Կոմիտասական 2, Երևան, 1981թ., էջ 227-244):

⁷ Ենցակյան Լ., Դայ հոգևոր մոնողիաների և արևելյան դասական մեղեղիների փոխառնչությունները, Դայատանը և Քիստոնյա Արևելը, Երևան 2000, էջ 211-216:

հասկաղես եկեղեցական երգարվեսի ինքնաշխորոյքան դահղանումն ու հետազա զարգացումը ազգային հոգեբանությանը և գեղագիտական ընկալումներին հարազա հունով: Այսեղից էլ արևելյան գեղագիտական գրծոնի և ճշմարիտ հայկականի առանձնացումը և հակադրումը:

Ցանկացած հայ-արևելյան նյութի ուսումնասիրումը մշտական բախվում է երևոյթների մի բարդությի հետ, որն ի դեռև է հանում հայ իրականության որոշ հասարակական ժերտում առկա մշտարքուն դահնջը՝ իմբնավորելու հիշատակված ժաների «արևելյան կաղաղադի» բացակայությունը մեր մշակույթում:

Հիշեցնենք, որ հայ իրականության մեջ ոչ վաղ խորհրդային անցյալում նոյնութեա ձևավորվեց հասարակական դասկերացում, հաճածայն որի՝ դրանք առավելացես մահմեդական՝ դարսկաքուրիֆական նկարագիր ունեն և անհարիտ են ազգային մշակույթին, ազգի ինքնությունը հավաստող գեղագիտական ու կրոնամշակութային խորհրդանիշներին:

Հայոց մեջ նման վերաբերմունք կար հասկաղես դասական մուղամարի նկատմամբ, որն ընկալվում էր որդես մահմեդական մշակույթի խորհրդանիշ: Նոյն օսարացմանն էր ենթարկվել նաև աշուղական սիրավելող⁸:

Ուսագրավն այն է, որ նման զնահատականները կենսունակ էին ոչ միայն Հայաստանում: Իրանում և Թուրքիայում դրանց հանդեղ մշտավորականության վերաբերմունքը նոյնութեա եղել է արհանարհական-մերժողական, թեև ժողովրդի լայն խավերն իրենց գեղագիտական հաճույքը սացել են այդ արվեսի միջոցով⁹:

Երեսն նոյնիսկ ամենաղաղանդական մահմեդական հասարակագերում «անախրոնիկ» դիտակավորումով աշուղներին և եղիկական երգիշներին սրճարաններից ու թիյարաններից վստելու փաստեն առիք են տալիս խորհելու մշակութային արժեների զնահաման, դահղանման և նոր հազարամյակում դրանց գոյաւնան բարյինդի տուրք:

⁸ Երնջական Լ., Աշուղական սիրավելոյի ձևավորման դատմությունից, Լրաբեր հասարակական գիտությունների, 2002թ., N2, էջ 59-69:

⁹ Ավանդությի ժխտման երևոյթ այնքան հոլիզի խնդիր է, որ իր արտացոլումն է գտնել նաև ժամանակակից գրողների, մասնավորապես եղիմտացի արձակագիրների ստեղծագործության մեջ:

Այսօր արդիական է դարձել ինչողևս մահմեդական Արևելքի և Քիւսոնյա Հայաստանի երածուական ավանդույթների համենատական ուսումնասիրությունը, այնողևս էլ արդեն «համարևելյան» կարգավիճակ ձեռք բերած այնոյիսի մշակութային երևույթների ֆնտույթունը, որոյիսի են վերոհիշյալ մուղամաքը, սազանարային-գործիքային երածությունը, առողական սիրավետը: Խնդրի բարդությունը նրանումն է, որ դարեւի դասմություն ունեցող հայ առողակումը դեմք է դիտարկել ինչողևս իր ազգային ծագումնաբանական հիմքով (ժողովրդական, հոգևոր և գուսանական երածության տարբեր ժանրային դրսուրումների հետ ունեցած աղերսների տեսանկյունով), այնողևս էլ ընդհանուր արևելյան երածուաբանաստեղծական արվեստի համաժեխում, որի գործուն մասնակիցն է եղել:

Միջնադարյան Արևելքում ստեղծվել են երածուական արվեստի երնիկ սահամններից անկախ միջազգային նորմեր, որոնց էթիկական-գեղագիտական հիմքի դահլյանումը դարտադրի էր մասնագետ-երաժիշտների համար: Երածուական արվեստի կանոնացման միտումը, աղահովելով նախորդ ցաջանների ավանդույթի շարունակումը, միևնույն ժամանակ նոյանական է արևելյան մշակույթների երածուական տեսակմների ու սեռերի ձևավորմանը նորմատիվ մտածողության դիրքերից: Այս հանգամանքը մեծապես նոյանական է առողական արվեստի ունիվերսալ երածուաբանաստեղծական սկզբունքների բյունեղացմանը և իր դրումն է բողել երաժիշտների հոգեբանության վրա, մղելով յուրանախնչութիւն հասկանալի և ընդունելի լինել հնարավորին չափ լայն ունկնդիր լարանի համար՝ հաղթահարելով լեզվական, կրոնաբարոյական դասնեւելոր: Առողական արվեստի դասական ցաջանում նրա բնութագրական առանձնահատկությունը ազգային դարոս չէ, առողի մասնագիտական վարդեւությունը արտազգային չափանիշներով էր որոշվում: Առողմտերի մեծ մասի համար, թերևս, այնքան էլ էական չի եղել ընդգծել ազգային դասկանելիության գործոնը. առավել կարևոր է համարվել վարդեւության ու հեղինակության ձեռքբերումը: Հավանական է, որ այսօրվա երածուական մշակույթի ազգային սահմաններն անարգել հատելու կարողությունն ինքնին մշակութային ժառանգություն է:

XX դարի երկորդ կեսից առողությունը սկսում է կորցնել երեսնի հնչեղությունը, լարանի համասեռությունն ու խանդավառություն-

նը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է բաղաբային բնակչությանը: Առողջական արվեստի պահպանական կենցաղավարման ու տարածման դայնանաձևերին՝ բաղաբային և զյուղական շրջիկ առողջենի ու դալաւական երաժիշտների գործունեություն, մեջլիսային մրցույթներ, հովանափրչական սրճարաններ ու թեյարաններ, փոխարինում են էսրադային, փառատնային, հեռուստաեսային և այլ համերգային թեմահարքակները: Խսկ ժանրային ժեսականուց սղվել են կանոնակարգված կատարողական ավանդույթ և ծիսարարողական համատեսության մրցույթները, հեռակա բանավեճերն ու ամրողջական սիրավետ-դաստանները: Նոր հայկական առողջական դրդոցի ձևավորմանը գուգընթաց փոխվել է առողջական երգերի թեմատիկան, որ գերիշխող են դարձել ազգային-հայրենասիրական և սոցիալական մոմիկները: Խախտվել է ավանդական բնակերգության դասկենային համակարգը, այլաբանական մասնողությունն ու խորհրդադատական էությունը, որ առողջական արվեստ էին բափանցել սովորների կրնագեղագիտական դասկենացումներով ներշնչված Արևելի բանաստեղծների ստեղծագործության միջնորդությամբ:

Առողջական երաժշտարանասեղծական մշակութային ժառանգության վերաբերման երկու ուղի է նեմարվում. նախ՝ ժողովրդամասնագիտացված և մասնագիտացված երաժիշտների ու համույթների կողմից առողջական ավանդական երկացանկի կատարումները¹⁰, երկրորդ՝ կոմոդիգնորդական ստեղծագործության մեջ առողջական արվեստի արահայտչամիջոցների օգտագործումը:

Սայաթ-Նովայի խաղերի հոգևոր դարսուն ու արևելյան ավանդական մեղեդիների արարողական ողին ներդաշնակ ու հասկանալի էին Ա.Խաչատրյանի համար, որի ստեղծագործությունը մի հզոր ալիք էր հայ երաժշտության մեջ և արևելյան զանազան մշակույթների վրա բողած ազդեցությամբ: Այդ մեղեդիների հոգևոր լիցքը այսօր էլ արզասարեր կարող է լինել ժամանակակից կոմոդիգնորդների նորարարական մահիացումների համար, իսկ առողջի նախասիրած գործիք՝ բամանչայի մուտքը սիմֆոնիկ նվազախումբ (Ա.Հովհաննես, Ա.Տերերյան) կարող է դիմում ուղարկել այդ հոգևոր ուղու վերածննդի խորհրդանիշ:

¹⁰ Առողջական արվեստը մերօյա դասկենացումներին համադատասխան «գգեսավրումով» ներկայացնելու առանձնությունն է սանձնել թ. Պողոսյանը՝ իր խսկ նախածնությամբ վերատեղած «Սայաթ-Նովա» առողջական երգի համույթի գործունեությամբ:

Պատահական չեն նաև Ա.Խաչատրյանի և Ս.Փարաջանովի ստեղծագործական տարբեր խնդիրներ հետաղնդող անդրադառնութերը Քյո-
նոլլուն և Աւոլ Ղարիբին:

Պետք է խոստվանել, որ մշակութային ժառանգության դահ-
դանան խնդիրները միշտ չեն, որ կախված են ժամանակակիցների
զնահատականներից ու նախադասվորյուններից. դրանք չեն կարող
կամային լուծումների կամ դարտադրված ծրագրերի նմանակվել:
Եզրակացում և Թուրքիայում աւուղական արվեստի ավանդական կա-
սարդական միջավայրը դահդանանը խնդիրներով մահովված
նվիրյալները նոյնիսկ փորձեր են արել սրճարաններ բացել, որտեղ
աւուղական երաժշտություն, մասնավորապես, դաստաններ դիմի կա-
սարդական միջավայրը դահդանանը նոյնիրներով մահովված
նվիրյալները նոյնիսկ փորձեր են արել սրճարաններ բացել, որտեղ
աւուղական երաժշտություն, մասնավորապես, դաստաններ դիմի կա-
սարդական միջավայրը դահդանանը նոյնիրներով: Նման փաստեր ենք արձանագրել նաև Երևանում. որուն
ուսուրաններում ժողովրդամասնագիտացված նվազածուների և եր-
գիշների կատարմանը հնչում են աւուղական երգեր և նոյնիսկ դասա-
կան մուղաններ՝ ըստ հաճախորդների նախասարության ու ձաւակի:

Որքանո՞վ սա կարող է նոյասել ավանդույթի դահդանանը
նոր հասարակական մշակութային համատեսական՝ ցույց կտա աղա-
գան: Ավանդական երաժշտական մշակույթի ցանկացած ճյուղ ենքա-
կա է փոխակերպման և վերածննան: բացառություն չի կազմում նաև
աւուղական երգարվեստն իր բազմաձև դրսուրումներով: Սակայն, ան-
կախ արվեստի սվյալ ճյուղի կենսունակությունից՝ իրեն հասարակա-
կան հնչեղություն ունեցող առկա արժեթիվ, ազգային ինքնության շի-
դուրանության ընդհանուր դաշտում է ինաստավորվում աւուղական
երգ-երաժշտության կատարդական ավանդույթի դահդանան և զի-
տական ուսումնասիրության անհրաժեշտությունը:

¹¹ Անհրաժեշտ են համարում մշակութային ժառանգության դահդանան խնդիր հետ
կապված հիշատակել, ու արդի գեներացին հավաքարության համատեսական, Աղրե-
ջանում և միջինասահական հանրապետություններում փոխվել է կին աւուղների ու մու-
ղամարահաների դերն ու սոցիալական դիրք հասարակագույն: Կին աւուղներն ու
սազանդարները ոչ ցանկալի դիմակներից խուսափելու համար, իրեն ստեղծագործա-
կան ներշնչան աղբյուր և փաստակ, օգագործում են Դուրանը: Ուսագրակ է նաև
հետխորհրդային օրջանում կին մոլլաների ի հայ զայր փաստը: Նշեն նաև, որ Երևան
են եկել ոչ վաղ անցյալի կին աւուղներին և մուղանարահահաներին նվիրված աշխա-
տամաններ, որոնցում, մշակույթի խնդիրներում գեներացին արդի զաղափարախոսությա-
նը համահունչ, ազգային-երաժշտական արվեստի դահդանան ու զարգացման գոր-
ծուն կարևորվում է «կանացի ծայնը»: Տես Ի. Նարդնիցկայայի հոդվածը Աղրեջանի
կին երաժշտական մասին, «Azerbaijanian Female Musicians: Women's Voices Defying
the Culture», Ethnomusicology, 2000, vol.44, N2.

Ալինա Փակելսանյան
Երևանի Կոմիտասի անվան
պետական կոնսերվատորիա

**ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ: ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ
ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանը, ինչողեւ հայտնի է, գտնվելով արևելյան տարածաշրջանի եզրին՝ Եվրոպայի և Ասիայի սահմանագծին, իր մեջ զուգորդում է երաժշտական մասնագործության ինչողեւ արևմտյան, այնողեւ էլ արևելյան գծեր: Իր երաժշտության մոնողիկ եռթյամբ՝ ինտոնացիոն տեսակետից չափազանց հարուստ հորիզոնականով, ուժեղ տոնիկական կենտրոն ունեցող ձայնակարգային յուրատեսակ կազմակերպվածությամբ, հիմնական և օժանդակ, մեկ, երթեմն և ավելի հենակետերի առկայությամբ հայ երաժշտական արվեստը հարում է Արևելքին: Միևնույն ժամանակ Արևոտնի հետ նաև կաղում են երկու էական հանգամաններ: Առաջինը՝ մեղեդու զարգացման տամարանությունը, որը ենթակվում է մժի կառուցվածքայնությանը, նրա ձևավորման դինամիկային, իսկ երկրորդը՝ երաժշտության ծավալումը ժամանակի այլ չափումների օրենքներով, բայց Արևելքում, չնայած հայ երաժշտության ոգուն խորը չէ նաև Արևելքի երաժշտությանը այնքան բնորու հուզական վիճակների ստացիկան:

Արևելյան բանավոր ավանդույթի մասնագիտացված երաժշտության հիմքը կազմող տարբեր տեսակների մեջ առանձնահատուկ տեղ ունի աւուղական արվեստը, որը չորս հարյուրամյակից ավելի չափազանց հարզված և տարածված է Հայաստանում: Ինչողեւ հավաստում է հայ աւուղական մշակույթի հետազոտողներից մեկը՝ Նիկողոս Թահմիզյանը, դրաֆեսիոնալ աւուղական արվեստի ծագումը կարգված է Անդրկովկասի և հյուսիսային Պարսկաստանի՝ հայ-ադրբեջանական բաղադրային բնակչության արհեստավորական շրջանների հետ և վերաբերում է 17-րդ դարի սկզբներին, չնայած աւուղմերի մասին առաջին հիշատակությունները հայկական միջնադարյան ձեռագրերում հանդիպում են արդեն 15-16-րդ դարերում:

Հայ աւուղական արվեստն իր զարգացման ընթացքում, բացի անխուսափելի ֆոլկլորային ազդեցություններից, իր մեջ է ներառել նաև

միջնադարյան հայ գուսանական ստեղծագործության, այսինքն՝ հեղինակային մասնագիտացված երգաստեղծության ավելի վաղ շրջանի ավանդույթները՝ փասորեն, դառնալով նրա ժառանգորդը:

Անկախ նրանից, թե ինչ միջավայրում է ընթացել աշուղի գործունելությունը՝ բայց այս գուլպական թագավարության միջև և ամենունեմ մնացել է բարձր գաղափարների կրող և սարածող, մարդկանց խոհերի և երազանցների արտահայտիչ նվաճելով ժողովրդի սերն ու հարգանքը:

Հայտնի է նաև, որ հայ աշուղները երգել են տեղի բարբառներով, նաև հարևան ժողովուրդների լեզուներով, ինչպես թելադրել է դամական իրադրույթունը:

Հայաստանի աշուղական արվեստում բազմադարյան զարգացման հետևանքով մշակվել է սեփական, քննորոշ երաժշտական լեզու, որում ցայտուն կերպով արտահայտված է հայ ազգային մեղեդային մշածողության յուրահատկությունը: Սակայն դրա հետ մեկտեղ մեղեդիական զինանցը խստորեն կանոնացված է, զոյտրյուն ունի ժիղական մեղեդիների մի ամբողջ շարֆ, ըստ Գ. Ալոմյանի՝ շուրջ 50, որոնք սերտորեն կաղված են աշուղական տաղաչափության այս կամ այն ժեսակի հետ:

Իրեն մասնագիտացված արվեստ՝ աշուղական արվեստն ունի իր կանոններն ու դասանուշները. ուսանակորը հորինել աշուղական տաղաչափության կանոնների համաձայն, որոնք բավականաշափ բարդ են և մեծաբանակ, բերանացի զիտենալ աշուղական դասական նմուշները, նախորդ և ժամանակակից աշուղների լավագույն ստեղծագործությունները, յուրացնել սվյալ վայրին ու ժամանակին հատուկ ժիղական մեղեդիները և ստեղծագործաբար կատարելագործել դրանք, մասնակցել աշուղական մրցույթներին, մշատին ծառայել ժողովրդին՝ ելույթ ունենալով միայնակ կամ փոքր գործիքային խմբի նվազակցությամբ:

Այս բարդ արվեստը բոլոր ժամանակներում դահանջել է իմբնարար մասնագիտական դասրասություն ինչպես բանաստեղծության, այնպես էլ երաժշտական ստեղծագործության ոլորտում: Էլ չենք խոսում կատարդական հնարներին ժիրադեմություն մասին, բայց որ աշուղը ոչ միայն բանաստեղծ և երաժիշտ-երգահան է, այլև երգիչ, ասմունքող և նվազածու:

Հայսնի է, որ հայ աւուղական ազգային դասական դրդոցի կազմավորումը սկսվեց մեծն Սայաթ-Նովայից (1712-1795): Լինելով ուշ միջնադարի վերջին ամենամեծ երաժիշտ-քանաստեղծը՝ Սայաթ-Նովան ժառանգորդն է դարձել նախորդ Եղանակների խոր ազգային պահպայքների, որոնք գալիս են մի կողմից՝ ինչ Հայաստանի գուանական արվեստից, մյուս կողմից՝ միջնադարյան տաղերգուների արվեստից, որոնց վերջին ներկայացուցիչները դարձան Նախաց Հովհանքանը (1661-1722), Պաղտասար Դոդիրը (1683-1768) և Պետրոս Ղափանցին (1700-1784):

Ազգային մշակույթի մեջ հնուց ձևավորված աւուղական տարբեր դրդոցների առկայությունը՝ հայ-դարսկական (17-րդ դ.), Կոստանդնուպոլիսի հայ-քորթական (18-րդ դարասկիզբ), Թիֆլիսի հայ-վրացական (18-րդ դ. կեսերը) վկայում է ավանդույթի խորության և գարգացածության մասին:

Հայ ազգային աւուղական նոր դրդոցի կազմավորումը, խարսխված հայ գրական լեզվի վրա, կատված է, ինչողևս հայսնի է, մեծն Զիվանու անվան հետ, որի գործի շարունակողները եղան գուաններ Ծերամը, Հավասին, Աւոնը, Շահենը, Իօնիքը և նրանց հետորդները:

Այսեղ ես ուզում եմ կանգ առնել մի լուրջ խնդրի վրա: Բանն այն է, որ 20-րդ դարի կեսերին, ժամանակի զաղափարային միտունների համաձայն, խորհրդահայ աւուղներին սկսեցին գուան կոչել՝ թերևս որոշելով «հայացնել» այդ արվեստի անվանումը: Ի դեմ, հայսնի է, որ «աւուղ» անվանումը արտաքական ծագում ունի և նշանակում է «սիրահար»: Սակայն հասկանալի է, որ լեզուն այսեղ մեղք չունի, բոլոր լեզուներում բազմաթիվ օսար ծագում ունեցող եղբեր են կիրառվում: Այսեղ կարևոր, բնականարար, արվեստի սվյալ երևույթի բովանդակությունն է, որը, անուշտ, բոլոր դեղբերում հայկական է թե խոսի և մեղեդու, թե՛ ձևակառուցման և կատարդական ոճի, թե՛ կերպարային մշածողության և հոգերանության առումով:

«Աւուղ» «զուանով» փոխարինելը, իմ կարծիքով, անքույլաւթելի խճողում առաջ բերեց, բանի որ այդ բառերի հետևում տարբեր դասմական շերտեր են, արվեստի տարբեր երևույթներ՝ տարբեր ոճերով, ստեղծագործական կանոններով: Աւուղական արվեստի կանոններով ստեղծագործող ժամանակակից հեղինակին գուան անվանելը հանգեցրեց մի կողմից՝ գիտական ճշմարտության խեղաթյուրմանը, մյուս


կողմից՝ հայ մշակույթի մեջ անուրանալի դեր ունեցող առողջական արվեստ անվան արժեազրկմանը, որ անքույլատելի է առողջական բարձ մշակույթի ժրելի համար:

Իրավիճակը չի փրկում այժմ լայնորեն կիրառվող «գուսանապետական» անվանումը, որ մասնագետների մեջ միայն տարակուսան է առաջացնում: Կարծում եմ, որ ձիւ կիխնի սվյալ դեղում հրաժարվել «գուսանապետական» և մանավանդ «գուսանական» անվանումից և երևոյները կոչել իրենց խսկական անուններով:

Առողջական արվեստ ավանդույթների զարգացումը արդի դայնաններում առաջարդում է մի շարժ կարևոր խնդիրներ, որոնց հետազոտումը և լուծումը դարձել է ժամանակի դահանջ:

Ահա դրանցից մեկը. *ինչպէ՞ս է փոխակամ աշողական արվեստ ավանդական նկարչագիրը*: Կենցաղակարճան արդի դայնաններում առողջական երգը դուրս է եկել բաղաբային սրճարանից, որտեղ նա ավանդաբար հնչել է, կամ զյուղական օդայից և բարձրացել է համերգային դահիճի բեմ բազմաթիվ ունկնդիրներով: Ժամանակակից դրոֆեսիոնալ բեմի օրենքները առաջարդում են իրենց դահանջները, որ դիտելի լինի, ունենա հետաքրքրական բենական լուծումներ, բանի որ ժամանակակից կյանքի ռիթմը, 20-րդ դարավերջի նարդու գեղարվեստական դահանջները՝ նրա հոգեբանությամբ և ճաշակով հանդերձ, այլ են, բան հնում: Դրանով է դայնանավորված նորացման օբյեկտիվ անհրաժեշտությունը: Այսդիսով ծնունդ են առնում համույթների նոր, ոչ ավանդական կազմեր, առաջանում է համադաշտախան մշակումների, ավանդական ժառանգության նոր փոխադրումների դահանջ: Իբրև Հայաստանի դայնաններում Արևելի և Արևմուտքի տարրերի անխուսափելի, օրինաչափ օրգանական սինթեզի հետևանք առաջ է զալիս գործիքային նվազակցության երաժշտական հյուսվածքի բազմաձայնան խնդիրը: Եվ, բնականաբար, կարևորվում է ազգային դրոֆեսիոնալ բազմաձայնության օրենքներին հավատարիմ մնալու անհրաժեշտությունը, բազմաձայնություն, որը բյուրեղացալ 20-րդ դարի երաժշտական գործունեության ընթացքում Կոմիտասի հանձարեն կրահումների ժնորհիվ:

Ինչորեն դեսք է զարգանա այսօր առողջական մասնագիտացված արվեստը, արյոն դեսք է նորամուծություններ բոյլ սա, թէ՝ դահմանի ավանդույթն անփոփոխ ձևով: Ի՞նչն է բոյլատելի փոխել առանց



ավանդույթին վճաս հասցնելու: Երածեազիտությունը կարո՞ղ է և դե՛սք է արդյոք միջամտի այդ գործնարացներին և փորձի ինչ-որ ձևով ներգրծել դրանց վրա: Ահա հարցե՛, որոնք մասհոգում են նրանց, ովքեր շահագրգրված են աշուղական ավանդույթի դաստիարակության մեջ՝ իբրև անցյալի կարևոր մշակութային ժառանգություն:

Աշուղական արվեստի արդի վիճակի հետ կապված մյուս, ոչ դահլաս կարևոր խնդիրը նույագրությունն է՝ դաստիարական բանավոր ձևով փոխանցվող երածեազիտական նյութի աղավաղման հնարավորությունը բացառելու նողատակով: Աշուղական բանասեղծության վիճակը, իհարկե, ավելի բարվու է եղել, քանի որ գրավոր ձևով է դաստիարակության աշուղական աշխարհությունը:

Նույագրությունը դեսք է լինի սույզ, խնամքով կատարված և բավականաչափ նանրանան: Սակայն աշուղական արվեստի դաստիարակության, դասակարգման և ուսումնասիրման համար այդքան անհրաժեշտ նույագրությունը ոչ մի չափով չյետք է փոխարինի բանավոր ավանդույթի կենդանի հնչողությանը՝ նրա կատարողական հանկարծաբանության և բնական տարբերակման դայմաններում, որը ցուցադրում է մշակույթի այդ ոլորտի երածեազիտական մասնագրության ողջ հարստությունը:

Աշուղական ավանդույթի դաստիարակության համար չափազանց կարևոր նշանակություն է սահմանման աշուղական սահմանագործությունը կարևոր չէ, թե որտեղ կլաստրասվի նա՝ կոնսերվատորիայում, թե՝ հասուկ դրդոցում, բայց հասկանալի է, որ բնուրյունից օժանական աշուղական հիմնարար դաստիարակությունը դեսք է սահման ինչորեւ բանասեղծական և երածեազիտական ստեղծագործության, այնորեւ էլ կատարդական արվեստի բնագավառում երգեցողություն, նվազ որևէ գործիքով, այսինքն՝ այն ամենը, ինչ նախկինում իր վարդեմից սովորում էր աղազա աշուղը:

Երևանի Կոմիտասի անվան դեւական կոնսերվատորիայի՝ Ժողովրդական նվազարանների և Ժողովրդական երգեցողության ամբիոնում (վարիչ՝ դրոֆ. Արքաս Ռուկանյան) ուսուցման հատուկ հայեցակար է մշակված, որի ընորհիվ մեծ ուսադրություն է դարձվում բանավոր և գրավոր մեթոդների խելացի զուգորդմանը: Նողատակ է դրվում սովորողի մեջ մշակելու և զարգացնելու «կենդանի» կատարդական հանկարծաբանության ունակություն և ոչ մի դեղինում ամրագրված

Տեսուով չճնշելու երաժշտական մտածողության բնական տարրերակայնությունը:

Ուսումնական գործընթացում կարևոր տեղ ունեն նաև ազգային՝ ժողովրդական երգեցողության տեխնիկայի յուրացումը, անաղարտ կատարողական ոճի զգացողության մշակումը, կատարողական մաներայի մարդումը օսար, հայ ազգային երգեցողությանը խոր տարրերից: Այս նույն մոտեցումը կիրառվում է նաև առողջական կատարողական արվեստում:

Իմ կարծիքով, Հայաստանում առողջական արվեստի կենցաղավարման համերգային ձևի հետարքական փորձ է կրուսակվել: Դեռ 20-րդ դարի 20-ական թվականներին մեծ ձանաչում էր վայելում անզուգական երգիչ, առողջական արվեստի գիտակ Շարա Տայանի ստեղծած «Հայ առուներ» համույթը, որը 30-ական թվականներին կրչվեց Սայաթ-Նովայի անվան: Համույթը մեծ համարում ուներ նաև այն ժամանակ, երբ նրա դեկավարությունը սահմանվեց մեր մյուս հիանալի երգիչն ու գիտակը՝ Վաղարշակ Սահակյանը: Վարդեսի մահվանից հետո դադարեց համույթի գործունեությունը: Ընդհատված կատարողական ավանդույթը վերականգնվեց 90-ականների սկզբին, երբ սկսեց գործել «Սայաթ-Նովա» առողջական երգի համույթը, որի ստեղծման նախաձեռնողը և գեղարվեստական դեկավար դարձավ երաժիշտ և բանասեր, առողջական երգերի գիտակ և հիանալի կատարող Թովմաս Պողոսյանը: Համույթը հետարքիր բեմական տեսք ունի՝ ճաւակով կատարված շարագիր և թերև, զուտ դեկորների ընորհիվ: Համույթի 15 երգիչ-երգչուհիներից բաղկացած վոկալ կազմը միավորում է երգիչ-կատարողների և երգող առողջների, որոնց թվում են Հայաստանում արդեն ձանաչում վայելող Միսիքար Քերքյանը և Րաֆֆի Հակոբյանը: Նվազագոյն կազմը մեծ չէ, մոտ է ավանդականին: Երգերի մշակումները, գործիքային նախանվազների և միջնանվազների ստեղծումը իրականացնում է գործիքային մասի դեկավար՝ երիտասարդ տաղանդավոր կոմոդիտուր և քառահար Արտեմ Խաչատրյանը, որի մասնագիտական միջամտությունը այնքան հարազատ է, որ աննկատ է անտեղյակ ունկնդրի համար: Նրա մշակումները բնական են և ունեն գեղարվեստական բարձր մակարդակ:

Համույթի հսկայածավալ երկացանկը ներառում է առողջական արվեստի բոլոր ժամանակների և ուղիղունալ դրանցների ստեղծագոր-

ծուրյան նմուշներ, առողջական դասական և ժամանակակից արվեստի լավագույն գործեր՝ ունկնդիրների լայն խավերին հաղորդակից դարձնելով նաև առողջական իմաստուն խոսքին:

Համերգային բեմում առողջական արվեստի կենցաղավարման նման ձևը ընդունելի է և բավական հեռանկարային:

Համերգային է, որ նոյեմբերի Հայաստանի համար 90-ականների դժվարին տարիներին չմարեց մտահոգությունը առողջական արվեստի դահլիճաննան նկատմամբ: Մի խոմք նվիրյալ մտավորականների ջանքերով 1995-ին ստեղծվեց «Սայաթ-Նովա» մշակութային միությունը, որի ղեկավարությունը ստանձնեց այդ ընորհակալ գործի նախաձեռնող, այժմ արդեն բանասիրական գիտությունների թեկնածու, կոնսերվատորիայի դրույտ Թովմաս Պողոսյանը: Միության հովանու ամենա տարի անց հիմնվեց Զիվանու անվան առողջական դպրոց (Տիօրեմ՝ Թ.Պողոսյան), այնուհետև Հայաստանի առողմանը միությունը (ղեկ՝ բան. գիտ. դոկտոր Շ.Գրիգորյան) և Առողջագիտական կենտրոնը (ղեկ՝ երաժեսագետ Լուսինե Նազարյան): Մշակութային միությանը կից գործում է նաև ձայնագրման ստուդիա, միությունը վարում է նաև հրատարակչական գործունեություն:

Առողջական դպրոց են ընդունվում ձայնեղ, ակնհայտ երաժշտական ընդունակություններ ունեցող, առողջական արվեստ սիրող երեխաները: Իսկ այն երիտասարդները, որոնք ստեղծագործական ձիրք են ցուցաբերում, զարգացնում են իրենց ունակությունները փորձառու առողմանը ղեկավարությամբ: Առողջական դպրոցում դասավանդվում են «Առողջական գրականության դասմություն», «Առողջական արվեստի տեսություն», «Սոլֆեզոն» և, որ ամենակարևորն է, «Առողջական երգ» առարկաները: Երեխաների հետ աշխատելիս զիսավոր նողասակ է դառնում ոչ թե ձայնի դրվածքը, մշակումը, որոնց, անուուծ, ուսադրություն է դարձվում, այլ լավագույն առողջական երգերի ուսուցումը: Սովորողները որոշակի դաշտ են կրուսակում, սովորում են ձիւ ընկալել և կատարել երգը, ոչ թե նմանակել ուրիշ կատարողներին, այլ կարողանալ խորապես զգալ և յուրովի հնչեցնել ծանոթ մեղեղին:

Ինչու տեսնում ենք, առողջական արվեստի հետ կաղված այս բազմուղակ կառույցը խելացիորեն մտածված է և առա հեռանկարային: Ծագրված աշխատանքները անխափան վարելու դեմքում մեծ գործ կարվի երիտասարդների մեջ երաժշտական և բանաստեղծական ազնիվ

ճաւակ մշակելու, իսկ տաղանդավոր աւուղների նոր սերունդ աձեցնելու ուղղությամբ: Ցավալի է միայն, որ այդ հայրենանվեր գործունեությունը ընթանում է առանց դատապահ դեւական հովանավորության: Իսկ դրա կարիքը մեծ է, զոնե համարատասխան տարած սահմանու իմաստով, որը կանոնավոր գործելու համար ամենակարևոր խնդիրն է:

Աւուղական արվեստը Հայաստանում, իրև ժողովրդադրոֆեսիոնալ երաժետական մշակույթի յուրահատուկ ձև, ոչ միայն կենդանի է ցայսօր, այլև զարմանալի կենսունակություն է դրսուրում: Եվ իրև ցանկացած կենդանի օրգանիզմ՝ այն ենթակա է զարգացման և այդ դատապահ էլ դահանջում է իր նկատմամբ ուսադրություն և հոգաւար վերաբերմունք:

Մանուկ Մանուկյան

Խ.Արուլյանի ամևան Հայկական Պետական
Մանկավարժական Համապատասխան

ՊԱՊՏԱՍԱՐ ԴՊԻՐ (1683-1768)

Պոլսահայ մշակութային կյանքի ականավոր գործիչ, հայ բնաւերգության երևելի դեմքերից մեկը՝ Պաղտասար Դղիրը, ծավալել է բազմակողմանի և արդյունավետ աշխատանքում որպես մանկավարժ, երաժիշտ, բանաստեղծ, մատենագիր և հրատարակիչ: Իր ստեղծած իմբնափողում, բանաստեղծականությամբ հագեցված երգերով շարունակելով տաղերի արվեստի ավանդույթը ներ՝ իր ժամանակակիցներ Նաղաս Հովնարանի և Պետրոս Ղափանցու հետ եղել է հայ առողջական երգարվեստի նախակարապետներից մեկը: Նրա երգերի բանաստեղծական ժեխումների բովանդակությունը, կերպարները խորապես հագեցված են մարդասիրական ոգով: Բնուրյան վառ դասկերների ֆոնի վրա մարմնավորված են բնեւանի զգացումներ, բարոյախրատական և խոհափիլիստիկայական թեմաներ:

Այժմ Պաղտասար Դղիրի երգերի բանաստեղծական ժեխումները մաշչելի են Շ. Նազարյանի և Ա. Մնացականյանի՝ 1958թ.-ին կազմած ժողովածուի ընորհիվ¹: Այդ ժողովածուն Շ. Նազարյանը վերանայել, ընդլայնել և վերահրատարակել է 1985 թ.-ին:² Այս երկու ժողովածուներն ել օճշված են կազմողների ծավալուն ու արժեքավոր ներածական ուսումնասիրություններով:

Առանց հավակնություն ունենալու բանասիրական վերլուծություններ անելու, ծանոթանալով Պաղտասար Դղիրի երկերի բանաստեղծական ժեխումները՝ առաջին հարցը, որ խկոյս նկատելի է դառնում, այն է, որ հեղինակն իր երգերի տողերի սկզբնատարերից կազմում է ակրոսիֆուններ. այսինքն՝ հարազատ է մնում տաղերի արվեստի ավանդույթներին:³ Այսպես օրինակ, 1985թ. ժողովածուի 85 երգում հառատողերի սկզբնատարերի ուղղահայաց ընթեցմամբ սացվում է «Պաղտասար

¹ Պաղտասար Դղիր, կազմեցին Շուշանիկ Նազարյանը և Ասառու Մնացականյանը, Երևան, 1958թ.:

² Պաղտասար Դղիր, «Տաղիկներ», Երևան, 1985թ.:

³ Նկատեն, որ Նաղաս Հովնարանը իր հեղինակությունը հաստատելու համար օգտագործել է և ակրոսիֆու, և վերջին տաճ մեջ օծել է իր անունը: Վերջինս համատարած սկզբում է դառնալու հայ առողջական երգարվեստում:

Դոդիրի է ողբա»: Այլ երգերում (II-16, 18, 19, 28, 32, 56-60, 63, 64, 69, 86) հեղինակն իր անունը նշում է աճրողջորժամբ կամ մասնակիորեն՝ «Ի Պաղտասաւ», «Ի Պաղտ» և նույնիսկ «Ի Պաղ»: Մի շարք երկերում (27, 36, 54, 68, 77, 87) ակրոսիֆոսը օգտազործված է երգի իմաստը նշելու համար: Ընդ որում, այդ միջոցը ծառայեցնում է նաև երգի արտադրման համար:

Նկատենի, որ Պաղտասաւ Դոդիրը երգերի վերջին բառատողում իր անունը նշելու կարիք չուներ, բանի որ այդ երգերը սարածվում էին իր հեղինակային սաղարանների միջոցով: Այլ եր լինելու հայ առողջների խնդիրը, երբ նրանց երգերը հիմնականում սարածվում էին բանավոր. ուրեմն ոյիշի զոնե երգի վերջում նշվեր հեղինակի անունը: Իհարկե, հեղինակի անունը նշվում էր նաև մի սրամին բնութագրական ձևով՝ Սայաթ-Նովան իրեն ոյիշի ներկայացներ որդես «Խալիս նորա», Զիվանին ոյիշի նշեր, որ «Կազ էը նասած բարական է մտել»: Վյուղ հարկավոր է հսակեցնել՝ ակրոսիֆոսը ի զրու եր գրական ձևով սարածման դեղում: Վերջին բառատողում անունը նշելը ի զրու եր բանավոր սարածման դեղում:

Մի այլ օաս կարևոր հարց է Պաղտասաւ Դոդիրի երգերի բանաստեղծական տեսություն հաճախ նկատվող սարքեր ձևերի և չափերի կրկնությունների նորագույն իմաստը, որ հենց առաջին հայացից ընկալվում է որդես մեղեդիական զորդունի հետ առնչվող երևոյք:

Իհարկե, գրականագետներն այս հարցում նոյնամբ կարող են ունենալ իրենց նկատառումները, սակայն մենք համոզված ենք, որ այդ կրկնությունների հիմնական դրամատառը մեղեդին ավելի հարուս ձևով զարգացնելու է: Կրկնությունների առանությունը, կիաստողերի - «redif»-ների և նույնիսկ առանձին վանկերի կրկնությունները, անտարակոյս, ստեղծված են երգելու և ոչ թե արտասանելու համար: Դեռ ավելին, այսովուհի կրկնությունները երթեմն հնարավորություն են սալիս ենթարություններ անելու նրանց մեղեդիների հնարավոր կառուցվածքների կամ շարադրանքների մասին: Հիշենիք, որ այս իմաստով կարևոր է այս հանգամանքը, որ Պաղտասաւ Դոդիրը, անձանք տղելով իր երգերը, բրդին է հանձնել այն ամենը, ինչը երգելու համար է ստեղծել: Օրինակ՝ «Ավեր բաղադ եղի անձն իմ» (1985, 65) երգի բանաստեղծական տեսուր կառուցված է եռատողերով, ըստ որում, յուրաքանչյուր երրորդ տող նախորդի կրկնությունն է: Այս սկզբունքը հետազոտությունների մեջ առաջարկվում է ուսումնական կառուցվածքների մասին:

լայն կիրառություն է սատել հայ աշուղական երգարվեսում: Բայց, առհասարակ, աշուղական երգերը հրատարակելիս կրկնությունները, իննըստիմյան հասկանալի համարելով, չեն սովոր, իսկ երգիշներն ել իրենց հայեցողությամբ կամ երգում, կամ ել բաց են քողնում կրկնությունները: Պահտասար Դոդիրը կանխել է այդուհի դատահականությունները և, ռոպելություն չհամարելով, առանց կրծատելու սովոր է իր երգերի բանաստեղծական տեսությունը կրկնվող տողերն ու տողերի մասերն այնողևս, ինչդեռ դահանջում էր իր ստեղծած երգերի մեղեդիների ծավալման ընթացքը:

Արհասարակ, երաժշտական գործոնի տեսանկյունից բանաստեղծական տողի կամ կիսատողի կրկնության տաճարանական նորատակն է մեղեդու սվյալ հասվածք տարբեր ձևերով ավարտել: Այսինքն՝ առաջին անգամ ավարտել համեմատաբար անկայուն, ավելի բարձ՝ սովորաբար դիմող ձայնի, դրմինանային մի որևէ աստիճանի վրա, վերադարձի՝ կրկնության անհրաժեշտություն ստեղծելու համար: Եվ երկրորդ անգամ՝ վերջավորող հնչյունի՝ տոնիկայի վրա, հանգիս եկլեզով ու ռիթմական դադարով ավարտել երաժշտական դարբերությունը: Հասկանալի է, որ նման կրկնությունը հարստացնում է մեղեդին, կարող է հարց ու դատախանի ձևով տաճարանական, ինասային ժետերը ուժեղացնել:

Այս հարցի կատակցությամբ կարելի է նկատել որքան ծավալուն է տեսուի կրկնվող հասվածքը, այնքան էլ հավանական են մեղեդու փոփոխությունների ու զարգացումների հնարավորությունները: Դրանք արդեն կարող են ոչ միայն տարբեր հնչյուններ լինել, այլև ավելի ծավալուն դարձվածքներ՝ մեղեդիխական նորանոր տարբերակումներով:

Պահտասար Դոդիրի երգերի ռոպել երգայնության առատության և բազմազանության մասին են հույսում նաև երգերի բանաստեղծական տեսություն առկա կրկնակների առատությունը: Իհարկե, կան նաև առհասարակ կրկնակ չունեցող երգեր, ինչդեռ 5, 32, 35, 40, 48, 79, 85 երգերը: Մի այլ խոսք են կազմում կրկնակ չունեցող երգերի բանաստեղծական տեսությունը, որոնց առաջին տաճ վերջնահանգը կրկնվում է հաջորդող տեսերի վերջին տողերում: Ի դեմք, այս սկզբունքը նոյնական հայ աշուղական երգարվեսում լայնութեն կիրապելու էր հետազայում: Սա, իհարկե, դեռ կրկնակ չէ, բայց արդեն կրկնակային գործառույթի սաղմնային վիճակ կարելի է համարել (տես 1985՝ 27, 34, 36, 42, 47, 51, 59, 76, 87 երգերը): Այս կրկնվող հանգի միջոցով երգի բանաստեղծական տեսությունը մի ավելի կուր ամրողություն է կազմում, իսկ յուրա-

բանչյուր տան հետ կրկնվող երաժշտական դարբերությունը, ավարտվելով այդ կրկնվող հանգով, ավելի կազմակերպված ու ավարտուն է դարձնում մեղեղին: Պահտասար Դոյիրի ժառանգության մեջ մեծամասնություն են կազմում այն բանաստեղծական տեսքերը, որոնք յուրաքանչյուր տան վերջում ունեն մինչև վերջ կրկնվող մեկ կամ երկու կրկնակային տող: Դրանք առանձնանում են ինքնուրույն հանգավորմամբ (st' ս 1985՝ 4, 11, 12, 16, 18, 19, 22-24, 31, 39, 46 երգեր): Բանաստեղծական տեսքերի մեջ սների ու կրկնակային տողերի այսպիսի գործված կառուցվածքը, ամենայն հավանականությամբ, կրկնակային մեղեղուն լրիվ ինքնուրույնություն դեռ չեր կարող տալ:

⁸ Տես ԳԱԹ, Գ. Սյունու փոնդ, N2:

«Մոլամային օղերա» և «ասիական երաժեսական դրամա» հասկացությունների հարաբերակցության հարցին մեմբ ավելի մանրամասնորեն կանորադառնանի սորու:

Գ. Ասիական երաժեսական դրաման հայ քարոզում

Ի վերջո, դեսք է ընդունել, որ ասիական առողջական սիրավետը առաջին անգամ բեմադրվել է Բաֆվում, որը ՈւՀաջիբեկովի «Լեյլի և Սեղնունն» էր: Դրան հետևեցին նաև հեղինակի «Շեյխ Սենանը» (1909), «Ռուսամ և Զոհրաբը» (1910), «Ասլի և Քյարամը» (1912), «Շահ Աբաս և Խուշիդրամանը» (1912) և «Գարունն ու Լեյին» (1915): Սակայն դեսք է նետել, որ 1911 թ. մարտի 6-ին Նիկիշին եղայրների քարոզում բեմադրվեց Սաւա Օզանեզաւչիլու «Ֆարհադ և Շիրին» օղերան՝ ըստ Նիզամու դումի (տեսա՞ծ՝ Միրզա Զալալ Յուսուֆ Զադեի):⁹

1914 թվականից Հաջիբեկովի երկերը, մասնավորապես «Ասլի և Քյարամը», գրավում են հայ ռեժիսորներ Ա.Արմենյանի և Հ.Ռուկանյանի ուսադրությունը, իսկ 1915-ից մեկը մյուսի հետևից սկսում են ձևավորվել քատերախմբեր, որոնք մասնագիտանում էին ասիական օղերենի, այդ բվում երաժեսական դրամայի բնագավառում (բացի Հ.Ռուկանյանից և Ա.Արմենյանից, նաև Գ.Փիրումյանի, Հ.Քաղդասարյանի, Գ.Երիցյանի, Մ.Տեր-Առաքելյանի քատերախմբերը Թիֆլիսում, Վ.Օհանյանինը՝ Բաֆվում): Հայենավում են ասիական երաժեսական դրամայի տասնյակ նմուշներ, որոնք երկացանկում սկսում են գրավել հաստատու տեղ: Ազդերում այսպիսի երկերի հեղինակային կազմը տրվում է հետևյալ կերպ: «Ասլի և Քյարամ»՝ ըստ առողջ Ջիվանու, բեմի համար վերամշակել է Հ. Ռուկանյանը, «Շահ Խսմահիլ»՝ ըստ առողջ Ջիվանու, վերամշակել է Սարդարյանը, կամ «Քյոռօղլի»՝ ըստ առողջ Զամալու՝ օղերեն հինգ գործողության՝ Հ. Տալյանը¹⁰: Այսպիսի ստեղծագործությունների երաժեսական մասը աղահովում էր համույթը, որի ամենատիպիկ կազմն է՝ բառ, բամանչա, սանրուր, ջուրակ, ֆեյտա և դավալ: Պարհիսնուա՝ որուստ այդպիսին, չկար: Այն փոխարինված էր այսուհետ կոչված «դիրեկցիոնով», որի մեջ նշված էր, թե երբ, որ բառն-

⁹ Տես ԳԱԹ, Ա.Օզանեզաւչիլու ֆոնդ, տես նաև Գևորգյան Գ., Սաւա Օզանեզաւչիլի, Երևան, 1973թ., էջ13-14:

¹⁰ Այս և նմանատիպ ազդերը տղագրվել են 10-ական թթ. հայ դարբերական մամուլում:

րով ինչ եղանակ դեմք է կատարվի: Պարզ է, որ ներկայացումն ուղեկցող երաժշտական համույթն իր երկացանկում արդեն ուներ այդ ստեղծագործությունները, դարտիստուի կարիք չէին օգում և հազիվ թե կարողանային կարդալ նվազախմբային ձայները¹¹:

Ասիական երաժշտական դրամայի հայկական տարբերակը հիմնականում առողջ Զիվանու և առողջ Զամալու թարգմանված արևելյան սիրավետերի բենականացումն էր: Պահուանվում էր սյուժեն, զործող անձերը բաժանվում էին դերերի, նոյն կերպ համադրասախանաբար բաժանվում էր և երգեցղական մասը: Խսկ դատմողական մասը վերածվում է դրամահիկ գործողության և երկխոսության:

Դ. Ասիական երաժշտական դրամայի կառուցվածքը և լեզվի առանձնահատկությունները

«Օղերա» ժանրային որակավորումը, որը սկզբ էր Է.Արասովան Ու. Հաջիբեկովի 1908-1915 թթ. ստեղծագործություններին, չի համադրասախանում նրանց իրական կառուցվածքին: Դրամի, ըստ էության, երաժշտական դրամաներ էին, որոնք ընդգրկում էին վոկալ մուլտամներ, նաև կովկասյան բաղադրյան երգեր և դարեր, ինչողևս նաև խոսակցական դրվագներ: Համարյա նոյնամիսի կառուցվածք ունեին ասիական երաժշտական բոլոր դրամաներն այն տարբերությամբ, որ 1915-1916թթ. և հետագայում ստեղծված ասիական երաժշտական դրամաների հայկական նմուշներում գերակշռում էր հայ առողջներին հատուկ ասերգային ոճը: Սակայն ընդգրկվում էին նաև մուլտամի՝ որդես ժանրի, ինչողևս նաև մուլտամին հատուկ հիմնացիոն կառուցվածքներ: Սա ցույց է տալիս, թե Գ. Սյունու «Ասի և Քյարամ»-ը, որն իրենից ներկայացնում է մասամբ մի «դիրեկցիոն», որտեղ միայն նեված են Սեղահ, Շիբյասա, Բայարի Շիրազ և այլ մուլտամներ, մասամբ էլ դարտիստու եվրոպական նվազախմբի համար: «Մուլտամյին» կարելի է անվանել Ս. Օզանեզաւվիլու «Ֆարհադ և Շիրինը»: Այս երկը արժանի է մանրակրկիս հետազոտման, բանի որ գրված է բազմաձայն դարտիստուի ձևով՝ արևելյան գործիքներից կազմված նվազախմբի համար: Եվ վերջադիս, անհրաժեշտ է ընդգծել, որ առաջին ասիական երաժշտական դրաման, որն ամբողջապես նախատեսված է եվրոպական նվա-

¹¹ Տես Տայան Ը., Դեղմեր, դեմքեր, մսեր: Երևան, 1973թ., էջ 94, տես նաև Անասովա Յ., նույնականության մասին, էջ 37:

զախմբի համար, Ա. Տիգրանյանի «Լեյլի և Մեջնունն» Է՛ ըստ Ավի-Զադեյի համանուն դրամայի, որը գրվել է 1918 թ.:¹² Անեն դեղփում ասի-ական երաժշտական դրաման արժանի է ուշադրության՝ որպես Արևել-Արևմուտք փոխազդեցության արդյունք:

Ե. Ասիական երաժշտական դրաման Արևել-Արևմուտք հարաբերակցության ժամանելունից

Նշենք մի բանի կես, որոնի դարձարանում են ասիական երաժշտական դրամայի այժմեականությունը XX դ. 10-ական թվականներին:

1. Դեռևս XIX դարից սկսած՝ արևմտյան, ինչդեռ նաև ռուսական երաժշտական բարոնը սկսում է անդրադառնալ բանավոր ավանդույթի դրոֆեսիոնալ երաժշտության ներկայացուցիչների կերպարներին, սյուժեներին, երաժշտությանը. այսպես, Ֆրանսիայում՝ տրուբադուների և տրովերների, Գերմանիայում՝ մինեզինզերների և մայսերզինզերների, Ռուսաստանում՝ գրալյարների: Հետևաբար այդ ժամանակաշրջանում հայ հասարակության մեջ վերածող հետաքրքրությունը առողջական արվեստի նկատմամբ և նրանց ստեղծագործության ներմուծումը դրոֆեսիոնալ բարոն օրինաչափ երևոյթ է:

2. XIXդ. վերջից և հատկանի առաջ առաջ եւրոպական երաժշտական երկրներում վերածում է հետաքրքրությունը ֆոլկլորի, նանավանդ ժաղաքային ֆոլկլորի նկատմամբ, ինչը իր արտահայտությունն է զգնում այդ ժամանում ստեղծված օպերաներում, օպերետներում, բալետներում, ինչդեռ նաև ասիական երաժշտական դրամայում:

3. Միաժամանակ XXդ. սկզբից կրուկ վերելիք է աղբում Եվրոպայի հետաքրքրությունը արևելյան մշակույթի հանդեպ: Ասիական երաժշտական դրամայի ծաղկման ժամանակ համընկնում է եվրոպական նոր ժիղով օրինավայրի ծաղկման ժամանի հետ:

Ի վերջո, անհրաժեշտ է արձանագրել, որ ասիական երաժշտական դրամայի ներք ձևավորված ավանդույթներն անմիջական կամ միջնորդված ձևով իրենց հետազարդացուցումը սացած հայ կոմոդիտիների օպերաներում, բալետներում, օպերետներում: Սակայն դա առանձին հետազոտության առարկա է:

¹² Տես ԳԱԹ, Արմեն Տիգրանյանի ֆոնդ, N 71:

ՀԱՅ ԱԾՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԺՄՆՐԱՅԻՆ ՈՒԹԵՄԱՏԻԿ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ երաժշտականաւողական արվեստը հազարամյակների դասմություն ունի, և այդ ընթացքում բազում ժերտեր են գոյացել, որոնք, մեկը մյուսի շարունակությունը դառնալով, մեկը մյուսին լրացնելով, մեզ են հասցել մեր նախնյաց ուրախ ու քախծոն հոյզերը, իդձերն ու երազանները, մտորումներն ու մտահոգությունները։ Այդ բազում ժերտերից մեկն էլ աշուղական արվեստն է, որը, ինչ-որ իմաստով մեր հին գուսանական արվեստի ու միջնադարյան աշխարհիկ սաղերգության օրգանական շարունակությունը լինելով, իր մեջ ներառելով նաև դարսկական, արարական և ընդիհանուր արևելյան բնարեգությանը բնորու սարրե՛ չնոյնացավ նրանց, այլ զարգացավ ու ձևավորվեց իրեւ ինքնուրույն ու ինքնաշխոտ արվեստի ձև։

Ծնունդ առնելով 15-16-րդ դարերում, ժամանակի ընթացքում կատարելագործվելով ու կուտակելով գեղարվեստական-մշակութային մնայուն արժեներ՝ հայ աշուղական արվեստն ամրապնդեց, կայունացրեց ու որուակիացրեց իր տեղն ու դերը մեր մշակութային կյանքում և 17-րդ դարում արդեն դարձավ հայկական ստեղծագործական-կատարողական արվեստի հիմնական դրսուրումներից մեկը։ 18-րդ դարի հայ աշխարհիկ բնարեգությունը մեզ է ներկայանում առավելադես աշուղական արվեստի ձևով։ Բայց ո՞րն է վերջադես այս արվեստի գոյության իմաստը, ժամանակի ի՞նչ ընդիհանություններ ունի նմանաշխոտ արվեստի այլ ձևերի հետ կամ ինչո՞վ է սարբերվում նրանցից, և որ ամենակարևորն է, ո՞րն է աշուղական արվեստի կենսունակության ու հարաւանան զաղսնիքը։ Հարցեր, որոնց դարզարանումը կրացահայտի մեզ համար մեր մշակույթի կարևոր երևոյթներից մեկի արժանիքները։ Ուստի հենց սկզբից փորձենք դարձել, թե աշուղական արվեստն ինչո՞վ է սարբերվում հին գուսանական արվեստից ու միջնադարյան աշխարհիկ սաղերգությունից, բանցի սարակարծություններն ու շփորությունները այս թեմայի շուրջ եւս են։

Նախ, ինչողես գիտեմ, իին գուսանների կամ գողքան երգիչների արվեսը հերանոսական տաճարներին կաղված արվես էր, և նրա զաղափարական հենքն ու իմբը հերանոսական հավան էր: Գուսանական երգերը, փասորնեն, ձններզեր ու ներբռներ էին՝ նվիրված հերանոսական աստվածներին կամ հանուն այդ աստվածների նահատակված առասպելական հերոսներին: Այդ դասձառով էլ հակասության մեջ հայսնվեցին քիչունեական զաղափարախոսության հետ և քիչունեական եկեղեցու կողմից մերժվեցին: Իսկ առողական արվեսի հենարանն ուղղակի աշխարհիկ լյանն էր, լյանի սերն ու վայելքները, իրական, աղրված հովզերը, կենսախինդ ու կենսահաստա զգացումները: Առողական երգերի բնարական հերոսը սիրուց կամ լյանի անարդարություններից տառապող կենանի մարդն է, ոչ թե հանուն որևէ ասծու դաշտամունի՛ վիշապների դեմ մարտնչող առասպելական կերպար: Սա է թերևս իմնական դասձառը, որ առողական արվեսն այդողես ջերմորեն ընդունվեց ու այդքան մեծ տարածում գտավ, այդքան կենսունակ եղավ ու հարաւուեց: Ի տարբերություն հերանու երգերի՝ դարձարդես աշխարհիկ բովանդակությամբ առողական ստեղծագործությունները լուրջ հակամարտության մեջ չեն քիչունեական զաղափարախոսության հետ: Պատմական ժամանակաշրջանն էլ այնոյին էր, որ դեսականությունը կորցրած երկրու ասիմանարա քուլանում էր վարչական աջակցությունից գրկված քիչունեական եկեղեցու ազդեցությունը: Պատմական չընդունելով, չճանաչելով աշխարհիկ մշակույթը՝ եկեղեցին առանձնապես չեր էլ արգելում դրա գոյությունը, այլ դարձարդես ուսադրության չեր արժանացնում: Ու ինքնահոսի մատնված՝ ինքն իր համար տարեային ձևով զարգանում էր առողական արվեսը, որ ծնվել էր ժողովրդի եռթյունից, դարձել նրա լյանի անբաժանելի նասը: Այն՝ ծնվել էր հենց հայի եռթյունից, և այդ «ծնունդը», ավելի ճիշտ՝ փոխակերպումը գուսանական արվեսից աշխարհիկ տաղերգության, աղա տաղերգությունից առողական արվեսի, տաս սահուն եղավ. հավանարա, դա բնականոն զարգացման մի ընթացք էր: Փասորնեն, հայ առողական արվեսը մարմնավորումը դարձավ դասմախաղական իրավիճակներով դայմանավորված ազգային նոր իդեալների՝ արևելյան կենսազգացողության ու քիչունեական մասձելակերպի համաձուման: Զարգացնելով Ֆրիկի, Երգնկացու, Թլկուրանցու և Աղթամարցու աշխարհիկ տաղերում արտահայտված

խոհափիլխոփայական, սիրո ու աշխարհիկ վայելքների թեմաները, դրանց միահյուսելով դարսկական ու արարական ժնարեգործյան մեջ տեղ գտած վարդի, բլրովի, զինու ու խնդրության թեմաները՝ հայ առող-ները մի նոր տուն հաղորդեցին մեր բազմադարյան ժնարեգործյանը։ Սակայն լոկ գաղափարական ու թեմատիկ փոփոխություններով չեր սահմանափակվում գրական այս առաջընթացը. կատարելազորդվում էր նաև չափարերությունը։ Եթե իին գուսանական երգեր հանգավոր չեն և խառը չափերով են, եթե աշխարհիկ սաղերգունների ստեղծագոր-ծուրյուններին բնորոշ են միօրինակ ու միադադար հանգավորումը, բանաստեղծական ոժերի ոչ հսակ ժեւսադրումը, աղա առողները մշակեցին ու կատարելության հասցին բանաստեղծական չափերի ու կոռոյթի, դրանց հետ համադարասխանեցրած որոշակի հանգերի կա-նոնները։

Բայց հայ առողների արվեստում գաղափարական, գեղարվես-տական-ոճական այս նորությունները ոչ միայն հեղինակների անհա-սական ինքնաշխատ մտածելակերպի ու առաջադեմ մսի արդյունքն էին, այլև կողմնակի ազդեցությունների, մասնավորապես հարևան ժողո-վուրդների հետ (դարսիկ, արար) ունեցած մշակութային ժփումների հետևանի։ Ոչ միայն առողների, այլև դեռևս շատ աշխարհիկ սաղեր-գունների ստեղծագործություններում նկատում ենի դարսկերեն, արարե-րեն, ավելի ուշ՝ նաև տաճկերեն բառեր ու արտահայտություններ, որը վկայում է, որ այդ ժամանակ հիշյալ լեզուները լավ հասկանայի էին մեր ժողովրդին։ Հետազայում տաճկերենը (ավելի ճիշը՝ օսմաներենը՝ դասական թուրքերենը) դարձավ հայ առողական արվեստի հիմնական լեզուներից մեկը։ Այսուհետեւ, հաճողված ենի, որ առողական ար-վեստն իր էությամբ խորապես հայկական երևոյթ է, թերեւ դատմա-քանակական իրավիճակներով դայմանավորված՝ բազմաթերթ է։ Այն հիմնականում սիրեցության արվեստ է, իսկ սիրո ու աշխարհիկ վա-յելքների գովերգումը մեր քրիստոնյա ժողովրդի համար «արգելված դժուդ» էր, ուստի առողական արվեստն առանձնանում, օսմանի դես դուրս էր մղվում հայ «դաւանական» ժնարեգործյունից, «հալածված ու մենակ» կացարան էր փնտում ժողովրդի հասարակ խավերի սրտե-րում։ Օսմաները, հենց թեկուզ դարսիկ ու արար ժնարեգործներն անար-գել կարող էին սեր երգել՝ դրա համար ոչ միայն չիալածվելով, այլև մեծարվելով, արքաների դալաններում փառ ու դասվի արժանանա-

լով: Դրա համար էլ հայ «պատերանական» բնարեգությունից դրսու մնաց սիրեցության արվեստ՝ «մեղավորի արվեստ»: Ու մեղավորի դեմ հայ աշուղն օսարի լեզվով էր երգում իր սերը: «Աւուղ» կամ «աւըղ» բառն էլ, որ արարերեն է ու «սիրահար» է նշանակում, մեռ աշխարհիկ սաղեցուների կողմից սկզբում հենց իր ուղղակի իմաստով էլ գործածվել է: Այս մի օրինակ 15-րդ դարի աշխարհիկ սաղեցու Գրիգորիս Աղքամարցու ստեղծագործություններից, որտեղ ոչ միայն «աւըղ» բառն է գործածվել իր նախնական իմաստով, այլև դարսկերեն տողեր կան.

Մուրդան քըֆտայնդ, այ դլոյդու, (Հավերն ասի՞՛ այ բլոու)
Քանի՞ կանչես, մեկ դահ լրուէ,
Ասաց թէ՝ Սէրըն կու նեղէ,
Որ վրայ վարդին աշըդ եղէ:¹

Ինչուս աշխարհիկ ժամ սաղեցուների ստեղծագործությունների, այնուս էլ հայ աշուղական արվեստի այս բազմաթեզու բնույթն ուներ նաև իր դասմաբաղաբական դասձանները, և անընդունելի ենք համարում այս հարցում բննադրական վերաբերմունքը: Դա դասմական ժխուր իրադարձությունների, սոցիալ-սահաբական լուրջ հեղաւորումների մի ժամանակաշրջան էր, երբ դեսականությունն ու իննուրույնությունը կորցրած մեր ժողովուրդը սփրոված էր համարվելու ու համակերպվելու օսարների դարտադրած դայմաններին: Բողոքել կարող էր լոկ իր մշակույթով, իր երգերով, ուսի երգն այդ հորինելով նաև օսարի լեզվով՝ մեր աշուղները կարծես ջանում էին նրանց էլ հասկանալի ու ընկալելի դարձնել մեր դարդ ու ցավը: Այնուս որ, նրանց օսարալեզու երգերում անզամ դահղանվում էր հայի մասձելակերպը, մարդասիրությունն ու բրիստոնյային բնորու բարեղաւությունն: Սա նշանակում է նաև, որ աշուղական արվեստն իր ողով խորացես մարդասիրական արվեստ է ու ինչ որ իմաստով գուցե բարության, առափնյական, բարեղաւության բարզություն է: Այստեղ սեղին է թերևս մեջբերել բանասեր, բանահավաք, աշուղագետ Տրդա-եղիսկոռոյս Պայանի հետևյալ տողերը. «Աւուղները ժողովրդեան համար տեսակ նը

¹ Աղքամարցի Գ., Տաղեր, «Դայ բնարեգություն» մատենաւար, Երևան, 1984թ., էջ36-37:

բարողիչ ալ եղած են: Ինչողէս հոգևորականութիւնը՝ նոյն դէս աւուղ ները, միւս վառ դահած են ժողովրդեան սրտին մեջ Քրիստոնէութեան, քարոյականի և ազնուութեան սէրը, ժողովուրդի դաստիարակն եղած են, իրանց խրասական, քարոյական, սրագրաւ, սփոփիչ և իմաստալից բնական երգերով ու տաղերով»:²

Եվ այսպէս, վսահաբար դնդում ենի, որ աւուղական արվեստ, անզամ երգ գործ ունենի օսարալեզու երգերի հետ, զուս հայկական երևույթ է. ոչ թե մենի ենի սովորել կամ փոխառել օսարներից, այլ հավանաբար ձիւս հակառակն է եղել: Ու միայն մենի չենի, որ այդ կարծիքն ենի: Խոսելով աւուղական սիրավետերի, հեթիարների ու հեռուստաբառում ասերի հայկական ծագման հավանականության մասին՝ իր կազմած աւուղական հեթիարների ու սիրավետերի ժողովածուի առաջարանում աւուղագետ Շավիդ Գրիգորյանն այն կարծիքն է հայտնում, թե Քյոռողին դասմական անձ է, այն էլ ազգությամբ հայ, իսկ աւուղ Ղարիբն ուղղակի չէր էլ կարող այլազգի լինել, բանի ո՞ր «....Ղարիբությունը մեր ազգային «մենաւոնրին» է: Այդ մենի ենի, որ եղել ու մնում ենի դարիք՝ մեր իսկ հոգ ու ցրին: Ղարիբ քորք չի եղել ու չէր էլ կարող լինել: Թուրքն իր հորից ե՞ր է զրկվել, որ օսարություն զնար ու դարիբ դառնաւ»:³ Հեւսաբար, թեև դարսկերենը, արաբերենն ու տաճկերենը լավ հասկանալի էին մեր ժողովրդին, և, անկասկած, հասկացես դարսկական մշակույթի ազդեցությունն ինչ-որ չափով նկատեի էր մեր աշխարհիկ տաղերգության ու աւուղական արվեստի վրա, սակայն դա ամենին չի նշանակում, թե հայ աւուղական արվեստը նրանցից ընդուրինակված արվեստ է: Ոչ միայն լեզվածական նոյնանձնություններով, այլև զաղափարական ու գեղագիտական ընդհանրություններով հանդերձ՝ հայ աւուղական արվեստն էալիս տարել է, իննաշիդ, այն իր մեջ միահյուսում է և քրիստոնէական քարոյականությանն ու մատելակերպին, և ընդհանուր արևելյան մշակույթին բնորու գծեր:

Արտֆնամես ընդունելով արաբական ու դարսկական հնարեգության մեջ տարածում գտած տաղաչափական ու հանգավորման կանոնները, դրանից զարգացնելով ու հարմարեցնելով մեր ժողովրդի լեզվամշածողությանը՝ հայ աւուղմերը կարողացան անաղարտ դահել

² Տրդաս-Եղիսակողոս Պայսան, Դայ աւուղմեր, ժողովրդական հայ երգիչներ և տաղասաց, Զմյուսնիա, 1911թ., էջ 8:

³ Գրիգորյան Շ., Սողոմոնյան Ռ., Աւուղ Ղարիբ, Քյոռողի, Ամրահ և Սալվի, Աղվան և Օսան, Երևան, 1992թ., էջ 15:

բազմադարյան մեր բնարեգության ոգին: Գեղարվեստական մի նոր ձև ու ուրակ ստանալով՝ մեր բնարեգությունն իր բովանդակությամբ չաղացավեց, չնոյնացավ դարսկական ու արարական բնարեգությանը, ընդհակառակը, կանոնավորված ոս্ফերն ու հանգերը որակադես փոխեցին, մի նոր հմայք հաղորդեցին հայ բնարեգությանը: Նոր ու բնիութ գազելները, դիվանիներն ու ղումաները, կտրուկ ու հասու ժեշտադրությամբ մյուստեղեններն ու երկփեղկվող տողերով լուրեյրները, որնց տողերի ոս্ফերն ու վանկային ժեշտադրումը կառուցված են մաքեմատիկական ճշգրտությամբ, ինչ-որ իմաստով տրամադրություն են սեղծում՝ լրացնելով ու ամբողջացնելով սեղծագործության բովանդակության իմաստը: Արևելյան կենսազգացողությունը, որ բնավ խորք չէր մեր ժողովրդի եռյանը, յորօշինակ վերածնունդ էր աղրում աշուղական արվեստի ժողովի: Զ՞ որ մենք ևս արևելյան ժողովուրդ ենք, իսկ Արևելքն իր բարյահոգերանական ընդհանուր աշխարհն ունի, հետևաբար, ընդհանրություններ նկատելով ասրբեր ժողովուրդների մշակույթների միջն դիմի գիտակցենին, որ դա ոչ թե որևէ կոնկրետ ազգին բնորոշ մշածելակերպի գերիշխանություն է, ոչ թե ընդօշինակություն, այլ նոյնանձան մշածողության, հասարակական կեցության, սոցիալ-բարյանական միևնույն կամ նման վիճակներից բխող համբնդիանուր աշխարհընկալման հետևանին: Բայց ինչո՞ւ աշուղները մշակեցին սահազափական ու հանգավորման այդքան բարդ կանոններ, առյուն միայն գեղագիտական նոյանակներով, չ՞ որ այդ ցշանի մեր գուանական երգերն ել գեղեցիկ էին (հիշենիք գուանների երգը «Սասունցի Դավիթ» եղոսից, երբ նրան Խանդուր խանումի դասվերով նրան զովերգնու էին եկել Դավթի առջև):

Տ'ասեմ, սի զովեմ Խանդուր խանում Դավթին.

Ենոր բոյ զյոլու եղեգ նման է:

Տ'ասեմ, սի զովեմ Խանդուր խանում Դավթին.

Ենոր սրիկ քուուկիկ Զալալու մեյզանն է:

Տ'ասեմ, սի զովեմ Խանդուր խանում Դավթին.

Ենոր բերան մեղրով բացած է ...:⁴

⁴ «Սասունցի Դավիթ», հայկական ժողովրդական եղոս, Երևան, 1961թ., էջ 258:

Պարզ է, որ աղաչափական կամոնները ոչ միայն գեղագիտական նոյատակով էին մշակվել, այլև ուսուցողական, ավելի ճիշ՝ դրանք ճշգրիտ չափանիշներ էին համարվում մրցակցության ժամանակ առողջի կարողությունները գնահատելու համար: Ի դեմ, նոյն նոյատակին էին ծառայում նաև մուխամաններ՝ առողջական հանելուկները: Առողջական չափերը որոշակի դեր ունեին նաև երգային-երաժշտական մասնակության մեջ, այսինքն՝ այդ չափերը համընկնում էին մեղեդու տակտին: Տաղաչափական ձևերից շատերին նոյնիսկ բնորու էին որոշակի մեղեդային կառուցներ (օրինակ՝ մյուստեղեկ ձևին): Առողջական երգերին բնորու չափերն են 6/5, 6/8, 8/6, 5/8, 8/5, 8/8, 7/8, 8/7, 7/7 չափերը, այսինքն՝ տների տողերը երկար էին՝ 11, 12, 14, 15, 16 վանկանի: 7 վանկանի բառատող տներից կազմված «քայաքի» ձևը հայ առողջերի ստեղծագործություններում ֆիշ է հանդիդում. այն ավելի շատ սարածված էր զուտ բանահյուսական՝ ֆոլկլորային ծագմամբ երկերում: Ի դեմ, առողջական արվեստը թեղեւ ընդհանրություններ ունի նաև բանահյուսության հետ, սակայն այն ժողովրդական-դրոֆեսիոնալ արվեստի ձև է, բանի որ առողջական ստեղծագործություններն ունեն կոնկրետ հեղինակներ և իրենց վրա կրում են հենց նրանց անհատական մատելակերպի կմիմքը՝ արտահայտելով նրանց հոլովակներն ու զգացմունքները: Տեխնիկական կազմությամբ էլ առողջական երգերը սարքերվում են բանահյուսականից. դրանք ավելի բարդ են, օժշված հոլովական ավելի մեծ ծանրաբեռնվածությամբ, փիլխոփայական խորաքափանցությամբ ու հասարակական ավելի մեծ հնչեղությամբ: Կատարողական չափանիշների տեսանկյունից առողջական երգերը համեմզային բնույթի են, դահանջում են հանդիսատես: Իսկ թեմատիկայով առողջական երգերն ավելի բազմաբնույթ են: Եթե ժողովրդական երգերը հիմնականում գեղջկական խաղիկներ են, ուսուցարի ժամանակ կատարվող կատակերգեր, օրորոցայիններ, աշխատանի կամ ծիսական երգեր, օսարության մեջ տանջվող դանդուխիսի բախծոն մրմունջներ, աղա առողջական երգերի թեմաներն ավելի բազմազան են՝ օժշված կյանի հակասությունների ավելի խոր ձանաչողությամբ:

Այդ բազմազան ու բազմաբնույթ թեմաների ուսումնասիրությունն անշափ կարևոր է, բանգի հարուս դասմագիտական և կենցաղագրական նյութ են դարունակում: Հենց սկզբից, սիրեգության ու բարոյախրատական թեմաներից զատ, հայ առողջերի ստեղծագործությունները

յունների մեջ, ինչպես և սղասելի էր, կարևոր տեղ զբաղեցրին քիչուն-եական հավասի՝ քիչուննեության և դանդիսության թեմաները։ Այլ կերպ չեր էլ կարող լինել, բանզի հայ աշուղական արվեստի ինքը հենց օսարության մեջ էր ծնվել։

Ուշափ ուրախ տրջիմ, դանդուխ եմ տանիս,
Եւ կամ ի մեջ ցաւոց, ոչ զոյ ընտանիս,
Միսէ իմ ամեն ժամ ի օրևանիս,
Կարօս եմ, կարօս եմ, կարօս՝ սիրելեաց,
Կարօս ազգականի եւ բարեկամաց...
(Աւուղ Հովսեսի (Յոսեֆ):⁵

Հիրավի, դասմաբաղաբական իրավիճակը դատկերացնելու, դանդուխի դառն ու ժխուր կյանքը, դանդիսության կործանարար հետևանիները հասկանալու համար կարևոր են այդ թեմայով հորինված աշուղական երգերը։ Ու երսի դանդիսության մեջ կամ թեկուզի հայրենի երկրում, բայց օսարի լիի տակ աղբեկով իննուրյունը չկորցնելու, ազգային նկարագիրը դահլիճնելու ձգտումն եր զուցե դասձառը, որ հայ աշուղական երգերում տեղ է գտել նաև քիչուննեական հավասի ու բարեղացության թեման։ Հայ աշուները նոյնիսկ իրենց հովանավոր եկեղեցին ունեին՝ Սուրբ Կարապետ վանքը, որտեղ ուխտի էին զնում աշուղական ժողով առնելու։ Բազում աշուղական երգեր կան հենց միայն Սուրբ Կարապետ վանին նվիրված (իիշենի Տաշչի Զադեի «Քեզանից հարցանեմ վարդետ իմաստուն...» սկսվածքով մոռհամնան, Ղափանցի Դովրանի «Սուրբ Կարապետ», Յաղոր օղլու «Ի վերայ Ս. Կարապետի», Քեանիանի «Գովասանություն առ վանս Մրդոյն Կարապետի» երգերը։⁶ Բնական է, որ իին դասմություն ու մշակույթ ունեցող ժողովրդի աշուները, անդրադառնալով դանդիսության ու քիչուննեության թեմաներին, իրենց ստեղծագործություններում չեն կարող չխոսել նաև մեր ժողովրդի դասմական անցյալի

⁵ Սկրչյան Ս., Յայ միջնադարյան դանդիսության տարեր, Եւլան, 1979թ., էջ 82, Մնացականյան Ա., Անժեր էցեր միջնադարյան հայկական դրեզիայից, Սաւոսոցի անվան Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, 1949թ., հ. 2, էջ 197։

⁶ Լևոնյան Գ., Յայ աշուներ, Ավեսանդրապոլ, 1892թ., էջ 78-79, Ախսեղյան Գ., Յայ աշուներ, Թիֆլիս, 1903թ., էջ 87, նոյն ժողով, էջ 331, նոյն ժողով, էջ 197։ Տես նաև մեր «Քիչուննեական եկեղեցին և հայ աշուղական արվեստ» հոդվածը, «Յայոց լեզու և գրականություն» գիտամեթոդական հանդես, 2001թ., հ. 3-4, էջ 118։

կամ իրենց աղրած ժամանակաւորանի դատմաքաղաքական իրադարձությունների մասին: Ուստի հյուպում էին նաև դատմական դատաներ, սոցիալ-քաղաքական թեմաներով երգեր: Հին աշուղներ Բաղեր օղի Ղազարի, Դոլ Հովհաննեսի, Դոլ Արզունո, Շամչի Մելքոնի դատմական դատաներում երբեմն դեմքերի ու իրադարձությունների քավական մանրամասն նկարագրությունների ենի հանդիդում, որոնք մեր ժողովրդի՝ սվյալ ժամանակաւորանի դատմության վերաբերյալ մեր դատկերացումներն ավելի ամբողջական են դարձնում: Հիշենիք թե կուոք Աղա Մահմուդ Խանի արշավանները դատկերող Դոլ Հովհաննեսի «Փոքր թիւն քանամ» և Շամչի Մելքոնի «Խվերայ աերման Տիխսիս քաղաքի, զալսեամբ Աղա Մահմուդ Խանի» դատմական դատաները, որոնք, նմանատիպ կերպածներ լինելով, կարծես լրացնելով մեկը մյուսի միտքը, տանում են մեզ դեռի այդ ահեղ օրերը:⁷

Ժամանակաւորակուր քարենի ու սգեղ երևոյթների, մարդկային բնափրության թերությունների բննադատության ենի հանդիդում սոցիալ-քննչական և երգիծական երգերում: Ահա թե իր աղրած ժամանակաւորանն ինչդես է բնութագրում 18-րդ դարի վրացահայ աշուղ Քեչիկ-Նովան:

Փուչի էստէս ժամանակը, յոյս ու հաւաս, սէր չըկայ,
Մաւչիլ ա ճշմարտութիւնն, մէկ իմանող սէր չըկայ,
Պիտօրվից իստակութիւնն, դատվօվ հէր ու մէր չըկայ,
Խափանվից բարելի միտքն, սէրով սալամ տալ չունինք...⁸

Իսկ դարսկահայ աշուղ Ամիր օղլին (18-րդ դ.) իր «Պարսավ» երգիծական տարրում ներկայացնում է արդեն տարեց մի կնոջ, որն իր անամոր ցանկասիրությամբ չարիք է դարձել խեղճ ամուսնու զիլին:

...Մարդի միրունի էր նա խուզում,
Չեռններով աչքերն էր բզում,
Սիրսն ջահել մարդ էր ուզում,
Չէր ամանչման տուն դառսվն...⁹

⁷ Երեխյան Ա., Աշուղ Դոլ Հովհաննես, Վենետիկ, 1929թ., էջ 61: Մելիքսեթ-բեկ Լ., Շամչի Մելքոն ու նրա հայերեն խաղերը, Երևան, 1958թ., էջ 56:

⁸ Ախվերդյան Գ., Ղայ աշուղներ, Թիֆլիս, 1903թ., էջ 314:

⁹ Երեխյան Ա., Աշուղ Ամիր օղլի, Նոր Զուղա, 1920թ., էջ 23:

Ժամանակաւշանի կենցաղն ու բարերն առավել վառ կերպով արտահայտված են խնջոյի երգերում, որոնցից շատերը հորինվել են զույգ հենց որոշակի առիթով: Այսեղ ներկայացվում են խնջոյի, խրախճանի տեսարաններն իրենց մանրամասնություններով: Ինչողևս երգիծական, այնուև էլ խնջոյի երգերի առաջին անգամ հանդիպում ենք հայ աշուղներից Նաղաւ Հովհաննի ստեղծագործություններում.

...Որ եղբարքն նստեն ծաղկեալ ծառի տակ,

Զեռացներն զինի՝ կարմիր ու յիստակ,

Թասի մէջ անկանի ծաղիկ սղիտակ.

Խմենի, եղբարի, զինի,

Բանն աստուած տինի....:¹⁰

Այս կարգի երգերում աշուղները հաճախ այնքան մանրամասնութեն են նկարագրում տեսարանները և ամենայն ձեզությամբ թվարկում սեղանի բարիքները, որ կարելի է դարզութեալ դաշկերույթը.

Զարդարած սուֆրա սեղանն,

Կարմիր ձու, կանաչ ռեհանն,

Դանակ, չանկալ, աղամանն,

Շարած դասըլխանի վերայ...

...Յամենայն բարին էլ զոված,

Քըֆտայ, սօլմայ կամ խօրոված,

Հաւըն անու եղօվ բօված,

Բօրլերն մէյ խանի վերայ...(Հարթուն օղլի):¹¹

Բայց աշուղական արվեստը սիրերգության արվեստ է, ուստի իիմնական թեման եղել ու մնում է սերը, որն արտահայտվում է ոչ միայն զույգային երգերում, այլև հարսանեկան արարողության առիթով հորինված կամ դարզադես ընտանիքի և օջախի զովերգությանը նվիր-

¹⁰ Հովհանն Ն., Տաղեր (աշխատությամբ Ա. Մնացականյանի), Երևան, 1983թ., էջ 83:

¹¹ Երեմյան Ա., Աշուղ Յարթուն օղլի, Նոր Զուղարք, 1920թ., էջ 54:

ված երգերում (իհշենի Հարթուն օղլու «Հարսի հրաժեւ» երգը:¹² Մեծանուն աշուղներ Սայաթ-Նովան, Քուչակն ու Նադաս Հովհանքանը ոչ միայն հայ բնարեցորդյան մեջ, այլև համաշխարհային սիրեցորդյան մեջ անգնահատելի արժեներ են քողել: Ծանոթանալով Սայաթ-Նովայի ստեղծագործություններին՝ ռուս անվանի գրող, հրադարակախոս ու թարգմանիչ Վալերի Բրյուսովը նրան «Արևելի Պետրարկա» է անվանել:

Աշուղական ստեղծագործությունների ժանրային ու թեմատիկ առանձնահատկություններին նվիրված մեր այս գեկուցման մեջ նոյասկահարմար չենք համարում ճանրամասնորեն անդրադառնալ նաև աշուղական հեթարքներին ու սիրավետերին, քանզի թեմատիկ առումով դրանք չեն էլ առանձնահատում աշուղական մյուս ստեղծագործություններից: Դրանցում էլ ծավալվում է սիրո թեման, որին ձուվում, միահյուսվում են բարոյախառական, կրոնական ու դանդիսության թեմաները («Աշուղ Ղարիբ», «Արշալոյս և Լուսարերիկ» (Ջիվանի), «Ամրահ և Սալվի» և այլն), արծարձիում են հայրենասիրության, հերոսականության ու սոցիալական բողոքի թեմաները («Քյոռօղլի»): Բացի այդ, ժամանակի սղության դաշճառով չենք փորձում աշուղական երգերը համեմատել կամ զուգահեռներ անցկացնել դրանց և միջնադարյան աշուղության դանդիսության ու սիրային սաղերի, այդ թեմաներով հյուսված բանահյուսական ծագմանը երգերի միջև: Այդոինի համեմատություն կանցկացնենք զուցել հետազայում մի առանձին հոդվածի մեջ: Անույուն, շատ այլ հարցեր էլ բաց մնացին, քանզի մեկ գեկուցման մեջ հնարավոր չէ բնել ու վերլուծել բոլոր հարցերը: Ուսի, եզրափակելով մեր խոսքը, ավելացնենք միայն, որ աշուղական արվեստի հիմնական առանձնահատկությունն այն է, որ սա սոսկ բնարեցորդյուն չէ, այլ արվեստի մի ձև, որը օղերային արվեստի, կինոյի ու թատրոնի դես իր մեջ միանգամից մի քանի տար է միահյուսում բնարեցորդյուն, երաժեւություն ու ստեղծագործության հեղինակային կատարում (նվազակցությամբ հանդերձ): Բայց ի տարերություն արվեստի վերոհիշյալ ձևերի՝ այստեղ այդ ամենը (ժեստի և մեղեդու հորինում, կատարում նվազակցությամբ) իրագործվում է մի մարդու ընորիկիվ, որն աշուղ է կոչվում:

¹² Նույն տեղում, էջ 42:

Լյուդմիլա Մելիքյան

ՀՀ մշակույթի և երիտասարդության
հարցերի նախարարություն

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՅԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՍԱՏԻԿԱՆ ԶԻՎԱՆՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵջ

Գուսանաաւուղական երաժեսությունը հայ երաժեսարվեսի՝ հազարամյակների խորից եկող իննուուրուն, հարուս ու կենսունակ ճյուղերից մեկն է: Անվիճելի է հայ գուսանաաւուղական երգարվեսի դասմական, գեղագիտական և դաստիարակչական նշանակությունը: Այն մեր դասմության ընթացքում ձևավորել, ընդհանրացրել ու արտացոլել է հայ ժողովրդի բոլոր խավերի հավախական գիտակցությունը: Դարեւ շարունակ աւուղական երգարվեսը եղել է մեր ազգի աշխարհիկ, առաջադիմական մասնակիության կրողը՝ գտնվելով ժողովրդի, մասնավորապես՝ հայ մշակութականության ուսարության կենտրոնում: Այն նաև հիմք է հայ դասական երաժեսարվեսի ձևավորման համար:

19-րդ դարի վերջին բառորդը հայ ժողովրդի դասմության ծանր ու ողբերգական ժամանակաշրջաններից է: Այդ տշանի հայ առաջադիմական արվեստի համարյա բոլոր բնագավառներում գերիշխում է հայրենասիրական, ազատասիրական, սոցիալ-խաղաֆական թեմատիկան: Հայ աւուղական երգարվեսը ազգային զարքոնի այդ ընթացքում փայլում կատարեց իր առաելությունը և նոյասեց ազգային արվեստում հայրենասիրական գաղափարների ձևավորմանն ու զարգացմանը:

Աւուղագետներ Գ. Լուսյանը, Ա. Նազինյանը¹ և Շ. Գրիգորյանը² իրենց հետազոտություններում նշում են, որ դարեւ շարունակ աւուղների ստեղծագործությունների առանցքը կազմել են սիրային երգերը և «աւուղ բառն էլ արաբերեն նշանակում է՝ սիրահար, սարփածու»: Սակայն մեր ժողովրդին վրա հասած փորձություններն անսարքեր չեն կարող բողնել առաջադեմ աւուղներին և ժամանակի դահանջով հետքենքն նրանց ստեղծագործության մեջ հետին ոլան է մղղում սիրային թեմատիկան՝ իր սեղը գիտելով սոցիալ-խաղաֆականին, ազգային - հայրենասիրականին: Զիվանին՝ հայ աւուղական արվեստի

¹ Նազինյան Ա., Հայ գուսաններ, Երևան, 1957թ., էջ 276:

² Գրիգորյան Շ., Սազայի, Երևան, 2000թ., էջ 26:

այդ մեծանուն ներկայացուցիչը ու հայ առողջական դուրցի հիմնադիրը, որդես իր ժամանակի առաջարեմ բաղաբացի, մշակույթի գործիչ, կիսելով իր ժողովրդին բաժին ընկած դառնություններն ու ծանր կացությունը, կանգնեց հայ մարդու, հայ ժինականի կողմին և իր ջուրակով երգեց նրա դարդն ու ցավը, նախանձեց այդ ծանր իրավիճակից դուրս զալու ուղիները:

Իհարկե, համեմատելով արվեսի ու մշակույթի մյուս բնազավառների հետ՝ առողջական երգերի արտահայտչամիջոցներն ավելի համես են, կարծես չունեն շենք գործիքավորում, դրամատորգիական խոր լարվածություն, մեծ ծավալներ ու մննումնենալիզմ։ Սակայն առողջական երգերը ունեին մի մեծ առավելություն։ Դրանք ընդգծված անմիջական էին և իրենց մասնիկության տնօրինվ հասու էին բոլորին՝ Եվրոպայում դասական կրություն ստացած արվեստագետից մինչև հայ զյուղացին³։ Զիվանու «Անք թռչնիկի նման» երգը դրա վառ աղացուցն է։ Առողին իր երգերով թևածում, թռչում, հասնում է ամենուր, առջույժ խալաֆներից մինչև այն հեռավոր զյուղական խրճիրներ, որտեղ 19-րդ դարի երկրորդ կեսին հայ ժինականը հայ թարոնի, գրականության, գեղանկարչության, դրոֆեսիոնալ երաժշտական արվեսի մասին լավագույն դեմքում միայն լսած կարող էր լինել։ Եվ այդ իրականության մեջ առողջական երգերը ոչ միայն գեղարվեստական արժեք էին ներկայացնում, այլև օժված էին կարևոր առավելության՝ սարածում էին ազգային զարդարների գաղափարներ։

Զիվանու ստեղծագործության հիմքն են՝

ա. հայրենասիրական երգերը,

բ. փիլիսոփայական երգերը,

գ. բարոյականական երգերը⁴։

³ Հայ մեծ լրսավորիչ Խ.Արովյանը գրում է. «... Ինձ դեռևս ոչ մի այլ երաժշտություն այնուես չի հոգել, չի խանդավառել, ամեն կարգի տրամադրություններով չի համակել, որին այս /առողջական – Լ.Ս./ երաժշտությունը; Եվ այսուս ես չափազանց շատ առիթներ եմ ունեցել հոգեկան միևնույն հոգումը դիմել ամբողջ հավատություն և հափառակել այնոինի չափով, որի նվազագույնն իսկ Եվրոպայում ոչ մի տեղ ունկնդիրների մոտ չեմ նկատել. ոչ թարոնում, որ այնոինի փառակետ, հրաշալի օմերաներ են երգում, ոչ էլ հավատույթում, որտեղ մշակված, հրաշալի ծայթեր կատարում են այնուես գնեցիկ, բարձրավես գործեր»՝ տես Խ.Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Երևան, 1961թ., էջ107-108։

⁴ Զիվանին ունի նաև շատ այլ սիրային երգեր, սակայն դրանք այսօրվա վերլուծության խնդիր չեն, մանավանդ որ դրանք իրենց գեղարվեստական արժանիթներով ավելի համես են այլ առողջների նոյնահամ երգերի համեմատությամբ։

19-րդ դարի երկորդ կեսի հայ աշուղների ստեղծագործության մեջ մասամբ ձևավորվել էր հայրենասիրության թեման: Աշուղներ Մալուլը, Պայծառեն, Զամալին, Ֆիզահին, Զահրին, Էհրաքին և մյուսները գրում էին հայրենասիրական երգեր, սակայն Զիվանին այդ երգերը հարսացրեց նոր արտահայտչամիջոցներով և դարձավ ուղղության առաջատարը: Հետևելով ժառանգաբար իրեն հասած աշուղների ստեղծագործական և ոճական ավանդույթներին և զարգացնելով դրանից Զիվանին նախանձեց այդ երգերի զարգացման նոր ուղղություններ:

Դրանցից մեկը այլարանությունն էր: Այլարանության կիրառումը հնարավորություն էր ստեղծում արքացնել ժողովրդին և նրան հասցնել հայրենասիրական, ազատասիրական զաղափարներ: Դա արվում էր հատկապես կայսերական գրաննությունը երջանցելու նղատակով: Բացի այդ, այլարանությունը ուներ նաև զեղարվեստական հմայք, ունկնդրին հնարավորություն էր տալիս «անձամբ բացահայտելու» բանված բովանդակությունը, մեկնարաննելու, յորովի ընկալելու, «ստեղծագործաբար» ունկնդրելու երգը:

Հաճախ երգի բանաստեղծական տեխնում հոդարկված իմաստը ավելի որոշակի ու հասկանայի էր դառնում երգի մեղեդու շարժման ու որբիք ընորհիվ: Այդ երգերից է Զիվանո՛ «Ես մեկ ծառ եմ ծիրանի»-ն, որը ստեղծագործական այլարանական միջոցի օգտագործման դասական օրինակներից է: Զիվանին, ներկայացնելով հայ ազգին խորհրդանող ծիրանի ծառի բարեմասնությունները, ընդամենը մի ժամի տողով ընդիանացնում է հայ ազգի ամենակարևոր հատկանիւններ՝ «իին՝ չորս հազար տարվա արմա լինելը», «մարդկությանը դիտանի բաղրահամ լինելը», «իշխանություն, այգեղան չունենալը»: Երգի բանաստեղծական տեխնի զգացումով լի զուտ դրամատիզմը լավագույնս արտահայտելու համար մեղեդու ծավալման համար ընթրված է հուզական երանց ունեցող հիդրոլոկրիական ձայնակարգը: Փոքրածավալ ձայնաշարի մեջ (*gis¹, a¹, b¹, c², d², es²*) ծավալվող մեղեդին զուտ է, ավելորդ զարդարանելներից զերծ:

Այս երգի մեղեդին կառուցվածքային առումով դասական նմուշ կարելի է համարել: Մեղեդու կառուցվածքը և բանաստեղծական տեխնի սաղաչափության համադրումը նոյնույն կայուն սկզբունքի է հիմքում: Տեխնում իրաւ են հաջորդում չորս և երեք սակագիր կազմված

դարձվածքները: «Ավա դ» բացականչությունը (հրատարակված ժողովածուներում այն բացակայում է) բանաստեղծական տեսիք մեջ կարծես չի մտնում: Սակայն հետևելով մեղեղիական գծի տրամադրությանը՝ նկատում ենք, որ այն կատարում է կիսակադանսի գործառույթ և նոյասում է մեղեդու եղրափակմանը:

Քաջածանոր լինելով ժողովրդական-գեղջկական երգարվեսի ոճական և ժողովրդական շուշտարային յուրահատուկ ոիրմանելմեջային առանձնահատկություններին՝ Զիվանին լայնորեն կիրառեց դրանի աշուղական երգի մեջ: Դա ևս մեկ միջոց է՝ երգով ժողովրդի ամենալայն խավերին հայրենասիրական գաղափարները հասանելի և ընթացնելի դարձնելու:

Զիվանու բազմաթիվ հայրենասիրական երգեր («Քոյրեիս մեջ», «Դեռ գիեւր է, առավու չէ», «Ալանանի», «Ազգ իմ» և այլն) հետևում են համարյա նոյն տրամադրությանը. բանաստեղծական տեսիք մեջ՝ այլաբանական շարադրաներով բուն իմաստի բողարկում, երաժեսության մեջ՝ սեղմ մեղեղիական կառուցվածք և փորբաժավալ ձայնաւար, հարուս ոիրմական դասկեր, մեղեդու միջոցով հայրենասիրական բովանդակության հաստատում, գեղջկական երգարվեսին՝ ընդհանրապես և ժողովրդական շուշտարերին մասնավորապես՝ բնորոշ ոիրման-ելմեջային տարրերի դաստիանում:

Բարոյախրատական և փիլիսոփայական երգերի ժանրը վաղուց ձևավորվել ու զարգացել էր հայ աշուղական երգարվեսում: Զիվանու ստեղծագործության մեջ դրանի առանձնահատուկ տեղ են զբաղեցնում: Սակայն մինչև Զիվանին ամենասուր ու ամենատարածված թեման անդատախան սիրո թեման էր: Խորադես զիտակցելով իր երգերի հասարակական մեծ դեմք ու նշանակությունը՝ Զիվանին իրեն հասուն համեստությամբ, նաև հղարժությամբ նշում է, որ «ինը ծառայում է իր ժողովրդին»:

Հովիկ Զիվանուց լուր տար,
Թե հարցնեն ինձի համար,
Ասա թե միշտ ձեռին բնար,
Ազգի համար կանչում է խաղ:

Զիվանին իր երգերն ուղղել է ազգի ամենալայն խավերին՝ զյուղի և խղաքի հասարակ, աշխատավոր մարդկանց: Հիմնվելով նրանց ժիշտակ ու առողջ, մարդասիրական ու ձեմարտացի կենսակիլիխոփայությանը՝

յան վրա՝ առաջին հայացից ուրգունակ թվացող բարոյախրատական իր երգերում Զիվանին խայրող երգիծանիք և խացված գեղարվեսական ընդհանրացումների միջոցով խրատականը հասցնում է բարոյականի, իսկ բարոյականը՝ փիլիսոփայական մոռումների մակարդակին:

Զիվանու այս շարի երգերը ուղղված էին ոչ թե մի խումբ մարդկանց համեմի ժամանցի կազմակերպմանը, այլ ժողովրդին, ազգին: Այդ երգերում մատուցվում էին ազգին հուզող մեկնաբանություններ, մոռումներ, դատողություններ: Մարդկային իդեալների գովարանությամբ, երթեան նաև մարդկային արաւների դարսավանիք միջոցով այդ երգերը նոյասում էին նաև ազգային իննազիտակցության բարձրացմանը: Խիս կարևոր է բարոյախրատական և փիլիսոփայական երգերում բանասեղծական տեսքի և մեղեդու միասնության դրսուրումը: Այսեղ ի հայս է զայխ Զիվանո՛ աւուղական երգարվեսի տաղաչափական բոլոր հնարքներին ժրադակական վարդեսությունը: «Մայրիկ» երգը, որն իր փոնք ծավալով, թվում է, թե սուս որդիական ջերմ երախսազիտության արտահայտություն է, նաև սոցիալական ուղղվածություն ունի: Երգում ներկայացված են մի կտոր հաց վասակելու համար օսար ավելում դեզեռող դանդուխ հայ մարդու մոռումները՝ մայր-ծննդավայր-հայրենիքի կարոտի զգացմունքների արտահայտությունը: Պարզ, անդամույթ, առանց ավելորդ զարդարանիքների A B A¹ եռամաս կառուցվածքով մեղեդին ներին լրացողիչ ընդլայնման միջոցով փոխանցում է ունկնդին խոր զգացմունքայնություն: «Աւուղը», «Իմ ջուրակը» երգերում Զիվանին բանասեղծական տեսքի և մեղեդու փայլում համարյությամբ կատարում է փիլիսոփայական և սոցիալական խոր ընդհանրացումներ: Այսեղ մեղեդին կազմված է փոնք մոտիվներով ու ֆրազներով, որոնք կրկնվում և շաղկաղվում են իրար, ինչ և ուրիշ աղահովվում է մեղեդու հոսունությունը:

Կյանի կենսափիլիսոփայությունը, ամենադժվարին դահենին հումորի զգացումը չկորցնող ժողովրդի վերաբերմունքն արտահայտված են այդ շարի լավագույն երգերից մեկում, որն իր արդիականությունը չի կորցրել մինչ օրս: Զիվանին «Խելի աւեցեմ»-ում, ընտեղով ասերգային ոճը, հետևել է ինն աւուղների երգարվեսում սարածված ասերգային ավանդույթին: Մեղեդին սկսվում է բարձրակեցից և շարունակվում է վարժներաց՝ համարյա սահուն շարժումով, առանց ցայտուն

հումների: Ութակտանի կառուցվածքով մեղեդին ընդգրկում է բանասեղծական տեսի մեկ բառատողը: Դորիական ձայնակարգը, կրկնությունների բացակայությունը աղահովում են մեղեդու սահունությունը, հոսունությունը և դինամիզմը: Երգի վերջին բառատողի համար (երգն ունի 20 բառատող) Զիվանին գրել է մեղեդու նոր սարբերակ: Այս կատարում է եզրափակման դեր, որտեղ ելեւջներն ավելի զուստ են: Սակայն ձայնակարգային առումով Զիվանին մի փոփոխություն է կատարել: Օժանդակ հենակետ հ'ի համար ներխի ձգտող տոն ա' հնչյունը դարձել է այս¹ դրանով սրելով ձգտող տոնի նշանակությունը: Սակայն առավել ուշագրավ է, որ, ըստ տրամադրանության, մեղեդին ց' տոնիկայի փոխարեն ավարտվում է ա' հնչյունով՝ հակադրելով այս¹-ա' հնչյունները, որը բարձ տոնչ է հաղորդում մեղեդուն: Այս սրամիս մատողության միջոցով Զիվանին հարցական ելեւջով է ավարտում երգը: Եթե այդ անկայուն ասիմմետրիկ ավարտվեր բառատողների մեղեդին, կարելի էր ենթադրել, որ այն արված է հաջորդ բառատողը սկսելու նոյատակով: Սակայն վերջին բառատողում անկայուն ասիմմետրի մեկ անգամ ևս հասառում է, որ հեղինակն ասես անավարտ է բողնում երգը՝ ունկնդրին բողնելով բազմաթիվ հարցերի դատասխանները, որոնց վրա նրանց ուշադրությունը փորձել է հրավիրել հեղինակը:

Զիվանու ստեղծագործության մեջ՝ նրա փիլիսոփայական երգերի շարքում, իր առանձնահատուկ տեղն ունի «Զախորդ օրեր» երգը: Իր խոր բովանդակության, գեղարվեստական բարձ արժանիքների ընորհիվ այն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Տարհանված հայ ժողովուրդը այն երգել է Դեմ-Չորի անաղատաներում, Կերչի ահեղ նար-սերի ժամանակ, հեռավոր հյուսիսի ախորավայրերում, որը ներենչել է հոյս, փորձություններին ու դժվարություններին դիմակայելու կամք և ուժ: Երգն ունի մի բանի սարբերակներ: Մ. Աղայանի և Շ. Տայանի՝ 1955թ. Երևանում հրատարակված ժողովածուում ընդգրկված սարբերակը, ըստ մեզ, ամենահազեցածն է: Մեղեդին մերք ասերգային, մերք ծորեցային երգանձով ծավալվելով՝ ընդգծում է բանաստեղծական տեսի իմաստը և կառույցը: Բանաստեղծական տեսի երրորդ տողի հետ կտրուկ փոխվում է մեղեդու շարադրանիք և առաջանում է ձայնակարգային բոլորովին նոր ոլորտ: Այս մեղեդիական օդակն ընկալվում է որդես եռմասանի կառույցի միջին՝ կենսրասային մաս: Մեղեդու սիեմատիկ կառուցվածքը հետևյալն է.

Քանաստեղծական տողեր	I, I ^r	II, II ^r	III	IV, IV ^r
Մեղեդու դարբերություններ	a	b	c	b'
Զայնակարգային երանգներ	մինոր	մաժոր	մինոր	մաժոր

Թվում է, թե երգն այսեղ կարող էր ավարտվել: Սակայն Զիվանին փորձել է երգի բովանդակության, փիլիսոփայական տրամաբանական ընդհանրացումը կատարել ոչ միայն բանաստեղծական տեսիք միջոցով, այլև մեղեդու: Դրա համար բանաստեղծական տեսիք աճբողջ բառատողը երգվում է ևս մեկ անգամ, առանց կրկնօրինների: Մեղեդիական օղակներն անհամեմատ սեղմ են, նոր զարգացումները բացակայում են, և այդ յուրօրինակ հավելվածի ութ տակտերից յուրաքանչյուրն ավարտվում է տոնիկայով: Փիլիսոփայական, լուրաւական, բազմակողմանի ու իմաստային եղրահանգումներով այդքան հազեցած երգում դժվար է չնկատել մեղեդիական լարվածորյան հետզհետէ մարտմբը: Նոյնքան դժվար է նաև չարի ու բարո՛ «կուզան ու կերպան»-ի հակադրությանը զուգահեռ՝ մինորի ու մաժորի հակադրության մասին խոսելու գայթակղությունից ազատվելը: Տիրադեսո՞ն էր արյոյն Զիվանին այժմյան մեր դասկերացումներին՝ մաժորի և մինորի զգացմունխային հակադրությանը, տեսական և կոմմոզիտորական տեխնիկայի հմտություններին: Մի բան ակնհայտ է: Նա ուներ հզոր երաժշտական զգացողություն և կարողություն՝ համադրելու հայ ժողովրդական, ազգային-երաժշտական մասնակիություն համամարդկային երաժշտական օրինաչափություններին:

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԶԱՅՆԱԴԱՐԱՆԻ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինսիտուտի ձայնադարանը հանրադետության ժողովրդական երաժշտության եզակի հարուս հավաքածուներից է: Այն ընդգրկում է ինչպես ժողովրդական, այնպես էլ ժողովրդադրֆեսիոնալ և հոգևոր երաժշտության բոլոր ժանրերը՝ ձայնագրված 1927թ.-ից մինչև մեր օրերը:

Մեր հաղորդման նոյառակն է ներկայացնել և բնութագրել ձայնադարանի շուրջ 2500 նմուշ ներառող աշուղական հավաքածուն, որ կազմված է արվեստի այս ոլորտի 22 ժանրի ձայնագրություններից՝ առավել հաճամանորեն բնության առնելով «Աշուղական ֆոնդ» հավաքածուն:

Նախնական սվյալներով¹ հավաքածուում աշուղական արվեստի առավել սիրված և ժողովրդայնություն վայելող ժանրը սիրավելոն է (ավելի բան 430 նմուշ): Սիրավելոյի ժանրը մասնագետները բավական ուսումնայիրել են², սակայն նյութը դեռևս ամբողջացման և հրատակման կարու է:

Աշուղական արվեստի երկրորդ մեծ խումբն են կազմում սիրելիքերը (շուրջ 400 նմուշ), այնուեւս, ըստ հաջորդականության՝ խոհական, գովիթ, խրատական, ազգային-հայրենասիրական, ինքնակենսագրական, երգիծական, հոգևոր, դանիշտության, դասմական, բնարական, սոցիալական, ծիսական-հարսանելիան, աշուղական մրցույթի (մեջլիս), կենցաղային, խնջույքի, օրորոցային, զինվորագրության, հերիարի, դարեւրի և անեծի ժանրերը:

Բացի այս, աշուղական արվեստի նմուշներ կան ձայնադարանի գրեթե բոլոր հավաքածուներում: Դրանցից առավել հարուս են Ա. Քո-

¹ Տվյալներն ավելի սույգ կլինեն, եթե հավաքածուի բարձրացմանը մուտքագրվի համակարգչի մեջ:

² Տես Երնջական Լ., Աշուղական սիրավելոյի հայ-արևելյան երաժշտական փոխառնչությունների համատեսում, դոկտորական ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինսիտուտ, Երևան, 2004թ.: Դանիելյան Դ., «Աշուղ Դարիք» սիրավելոյի Զավակի աշուղական արվեստի համակարգչի մեջ պահպանության մասին» աշխատաթուղթ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինսիտուտ, Երևան, 1999թ., էջ 14-16:

չարյանի (259 նմուշ, որի մի մասը հրատարակվել է նրա հեղինակած ժողովածությամբ³), Հ. Գրգչարյանի (Վարդենիս, Դուլկասյան, 1964թ. գիտարարակ, 76 նմուշ), Մ. Մուրադյանի (Աղարան. 1969 թ. գիտարարակի ֆոնդ, 102 նմուշ), Մ. Մանուկյանի (Մարտունու շրջանի գիտարարակ, 1974թ., 1977թ., 84 նմուշ), Ալբալիլարի գիտարարակվեների՝ 1967թ., 134 նմուշ և 1970թ.՝ 160 նմուշ հավաքածուները:

Ի դեմ, Արվեստի ինսիտուտի ավագ գիտաշխատող Զ. Թագակչյանն արդեն հրատարակության է դատաստում Զավախիքի գիտարարավեների ընթացքում իր գրանցած ավանդական երգերի հավաքածուներից կազմված ժողովածուն, որտեղ առանձին բաժին է հատկացվել նաև առողջական երգերին:

Արվեստի ինսիտուտի առողջական ֆոնդի կատարումներում բանասացների ճնշող մեծամասնությունը տրամադրյալ էն, քանզի առողջական արվեստի հիմնական կատարողները և սարածողները հենց նրանի են: «Տարեց տղամարդ երգասացը նախընտրում է երգարվեստի «լուս» ժամկետը՝ վիլական, դասմահայրենապահիրական, առողջական ...»⁴: Կատարումները վոկալ են կամ վոկալ-նվազարանային, ընդունում՝ նվազարանի ուղեկցությամբ առավելադես հնչում են իրենց՝ առողջների կատարումները:

Այս առումով խիստ արժեքավոր ձայնագրություններ են կատարել Քր. Քուչենարյանը՝ առողջ Շերամի կատարմամբ (12 նմուշ), Ա. Քոչարյանը՝ առողջներ Շերամի, Չահենի, Հավասու, Սաղաֆու և այլոց կատարմամբ⁵:

Երգերի ծանրակշիռ մասը հայերեն է, թեև հանդիդում են նաև բուրժենեն և բրենեն կատարումներ:

Առողջների նվազարանները հայոց ավանդույթում սարածված և ժողովրդի դասկերացումներում առողջական համարվող լարային ընսանիքի գործիքներն են՝ բամանչա, քառ, սազ, քանոն, թնանի:

Ի տարբերություն ժողովրդական բուն ավանդույթի՝ խորհրդային շրջանում առողջական արվեստը որոշակի գաղափարական, ժանրային

³ Քոչարյան Ա., Դայ գուսանական երգեր, Երևան, 1976 թ.:
